مجلة آويدارانى تساين

ՈՉ-ՊԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԽ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄԱԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Թ. ՏԱՐԻ — ՍԵՊՏ. ՀՈԿՏ. 1947 — ԹԻՒ 9 10

(Տե՛ս յօդուած էջ 133ը)

ԿԱՐԵՒՈՐ ԿԷՏԵՐ ԹԵՐԹԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

1.— Մեր նշանաբանը.— Էական կէտերու մէջ միութիւն, ոչ էական կէտերու մէջ ազատութիւն, իսկ ամէն բանի մէջ սէր:—*Օգոստինոս*

2.— Նպատակը.— Ծառայել Քրիստոսի սրբազան դասին: Պայքարիլ մոլորութեանց դէմ: Տարածել Աւետարանի նշմարտութիւնը, Քրիստոսի ձրի փրկութիւնը բաւական արեան շնորհիւ: Շեշտել ապաշխարութեան եւ վերստին ծնունդի անհրաժեշտութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնելու: Մղել փրկուածները սրբագործուած կեանքի եւ այսպէս պատրաստել զանոնք Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3.— Դաւանանքը.— Կը հաւատայ (1) Ս. Գրոց Աստուծմէ ներշնչեալ, անսխալական եւ հաւատքի ու կեանքի կանոնը ըլլալուն: (2) Ամենասուրբ Երրորդութեան: (3) Քրիստոսի Աստուածութեան: (4) Ս. Հոգւոյն անձնաւորութեան: (5) Վերստին Ծնունդի: (6) Ս. Հոգիով փրկուած կեանքի: (7) Մեր Տէրոջ Կրկին, անձամբ վերադարձին: (8) Մեռելներու յարութեան: (9) Ընդհանուր դատաստանի: (10) Երբոյ՝ Քրիստոսի հետ թագաւորութեան: (11) Երկինքի եւ դժոխքի: (12) Սատանային անձնաւորութեան, բարի եւ չար հրեշտակներու գոյութեան: (13) Արդարներուն համար յաւիտենական կեանքի, իսկ մեղաւորներուն համար՝ յաւիտենական տանջանքի: (14) Եկեղեցւոյ միասնականութեան եւ անոր վերջնական յաղթանակին:

4.— Կը հրատարակուի իբր ոչ-յարանուանական անկախ կրօնական ամսաթերթ, հայերէն եւ հայատառ թրքերէն լեզուներով:

5.— Աշխարհիկ ծանուցումներ չեն ընդունուիր:

6.— Յօդուածներ կ'ընդունուին անոնցմէ, որոնք հոգեւոր կեանքի անձնական փորձառութիւնը եւ դուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունին, կը յարգեն թերթին ուղղութիւնը եւ ղրկուած յօդուածները կը ծառայեն հետապնդուած նպատակին:

7.— Թերթիս սիւնակները տրամադրելի չեն վիճաբանական նիւթերու համար եթէ անոնք պարզապէս վէճեր յարուցանելու կը ծառայեն եւ ոչ թէ լուսաբանութիւններու:

8.— Չհրատարակուած յօդուածները չեն վերադարձուիր

9.— Բաժանորդագրութիւնը կանխիկ է եւ վեց ամիսէն նուազ պայմանաժամով բաժանորդագրութիւն չընդունուիր:

10.— Եղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանելու իրաւունքը կը վերապահուի այդ սիւնակը վարողին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈՁ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԽ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Հրատարակատէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ —:— Propr: Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝ Վեր. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ
Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ
Դր. Կ. Ց. ԹՈՒՄԱԵԱՆ

Թ. ՏԱՐԻ — ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ 1947 — ԹԻՒ 9—10

ԵՐԲ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԱՏՆՈՒԻՆՔ

Սաղմ. 50:15

Կ'ըսուի թէ Սբ. Գրոց մէջ կան երեսուն հազար խոստումներ, որոնց երեք հազարը Սաղմոսներուն մէջ: Այն խոստումներուն ամենագեղեցիկներէն է վերոյիշեալ համարին մէջ յիշուածը: Այսպէս կը կարդանք հոն. «*Նեղութեան օրը ինծի կանչէ, ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես*»:

Ըսելու հարկ չկայ, որ այս խոստումը Աստուծոյ ժողովուրդին համար է: Ան կը հրաւիրէ իր զաւակները կանչելու Իրեն երբ նեղութեան մատնուին: Այս արարքը աշխարհայիններու հայեացքով անմնասիրական արարք մըն է, երբ հաւատացեալներ նեղութիւն պատճառող իրերու հարկադրանքին տակ Տէրոջը աղաղակեն: Սակայն Տէրը այլապէս կը խորհի, եւ կը նկատէ զայն ոչ թէ մարդուն համար անմնասիրական *«քթ»* մը այլ Իրեն հանելի միջոց իսկ զինքը փառաւորող գործ մը, «Դուն զիս պիտի փառաւորես»:

Արդ, Աստուծոյ զաւակները պէտք է քաջալերուին Տէրոջը աղօթելու երբ անոնք մատնուած են կերպ կերպ նեղութիւններու: Ով փրկուած հոգի, երբ փորձութեանց ալիքները քեզ ծովամոյն ընելու կ'սպառնան, Պետրոսին պէս աղաղակէ Փրկչին: Երբ Ֆիզիքական ցաւերէ կը տառապիս, կոյր Բարդողիմէոսի նման կանչէ Յիսուսի եւ հոգ մի՛ ըներ արգիլողներն ու յանդիմանողները:

Ո՛րեւէ ժամանակ Տէրոջը կանչել զինքը կը փառաւորէ, սակայն մասնաւորապէս նեղութեան օրը: Ինչո՞ւ ասիկա. որովհետեւ մանուկ մը երբ ցաւ մը ունենայ, անմիջապէս իր մօրը կը դիմէ, վստահօրէն գիտնալով թէ աշխարհի

վրայ իրեն ամենամօտիկը, միակ կարեկիցը եւ օգնելու սիրայօժար արարածը իր մայրն է: Կանչել մօրը, մայրական այս բոլոր յատկութիւնները ճանչցնալ կը նշանակէ: Երախայ մը ուրիշը իր օգնութեան չի կանչեր, այդպիսի արարք մը իր ծնողաց պատիւ չէ: Ճիշդ միեւնոյն իմաստով երբ Աստուծոյ զաւակը նեղութեան մատնուի եւ օգնութեան համար ուրիշին դիմէ, Տէրոջը հանելի չգար, եւ անով Ան չփառաւորուիր: Ատիկա կ'ենթադրէ Հօր Աստուծոյ հանդէպ անվստահութիւն: Ի՞նչպէս կանչել մէկու մը որ վստահ չես որ քեզ կը լսէ եւ քեզ կ'ուզէ փրկել: Սակայն Տէրոջը աղաղակել նեղութեան ատեն կը նշանակէ թէ ընդունուած է թէ Ան մօտ է եւ պատրաստ օգնելու ինչպէս մայր մը:

Տակաւին. երբ մանուկը յանդիմանուի եւ պատժուի, մօրը սիրոյն վրայ չկասկածիր, երբ օտարը կանչէ դարձեալ օտարին չերթար, հապա աւելի կը փարի իր մօրը: Երբ Տէրը թոյլատրէ որ մենք տագնապինք, եւ այդ տագնապին մէջ առանց կասկածելու Իր սիրոյն վրայ կանչենք Իրեն, այս արարքը անհուն ուրախութիւն կը պատճառէ աստուածային սրտին, եւ զԻնքը մեծապէս կը փառաւորէ:

Աշխարհայինները այդպէս չեն: Անոնք Տէրը կրնան օրհնել որքան ատեն որ ամէն ինչ անոնց փափաքին համեմատ կ'ընթանայ: Հակառակ պարագային՝ Տէրը իրենց համար բարի, գթած եւ սիրող Աստուած մը չէ, այլ՝ խիստ եւ անկարեկից: Տէրոջը զաւակը անվերապահ վստահութիւն կ'ունենայ, ինչպէս մեծն Աղեքսանդր ունեցաւ իր անձնական բժիշկին վրայ: Բժիշկը դեղ մը յանձնարարած էր իրեն, սակայն խմելէն առաջ Աղեքսանդր նամակ մը կ'ստանայ ըսող, թէ դեղը թոյն կը պարունակէ եւ թէ բժիշկը կաշառուած է զինքը թունաւորելու համար: Մեծն Աղեքսանդր բժիշկը իր քովը կը կանչէ, իր ներկայութեան՝ դեղը կը խմէ եւ նամակը իրեն կը ներկայացնէ որ կարդայ: Սակայն ան դեղը խմելով գործնականապէս ցոյց տուած էր իր բժիշկին, թէ ինքը կատարեալ վստահութիւն ունի իր վրայ, եւ ոչ մէկ կարեւորութիւն տուած է նամակին պարունակութեան: Մեր երկնային Հայրը աւելի նուա՞զ արժանի է մեր վստահութեան: Եւ երբ այս վստահութիւնը տեսնէ Տէրը մեծապէս կը փառաւորուի: Ա՛ռդ, ով տառապեալ եւ խռովակոծ հոգի, մի՛ նստիր տրտնջելով եւ գանգատելով, նկուն եւ յուսահատ այլ կանչէ Տէրոջը: Արդարեւ օրհնեալ բան է ըսել, «Թէ Ան գիս սպաննէ դարձեալ Անոր պիտի վստահիմ»: «Ան բարի է եւ ողորմած բոլոր գործերուն մէջ»:

Ցետոյ Ան պիտի փառաւորուի մեր աղօթքներուն պատասխանուելովը: «Ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես»: Անոր խոստումները անխախտ են ինչպէս խոստացողը: Ան պիտի կատարէ Իր խոստումները: Մի՛ հարցներ թէ ի՞նչպէս եւ ե՞րբ պիտի ազատէ: Դանիէլը իր գուբին մէջ, երեք երիտասարդներ եօթնապատիկ վառած հնոցին մէջ, այդպիսի հարցումներ չբրին: Երբ եկեղեցիին աղօթք տեղի կ'ունենար Պետրոսին ազատագրութեան համար, չհարցուցին, թէ ի՞նչպէս պիտի բացուին երկաթեայ դռները: Երբ Տէրը ուզէ ազատել Յովնանը ձուկը զայն ցամաք կը նետէ: Դուն միայն վստահէ, եւ մի՛ տարակուսիր Աստուծոյ զօրութեան վրայ:

Ազատութենէն ետքը պիտի գայ Տէրոջը հանդէպ երախտապարտ սիրտ մը: Կանչեցիր եւ Ան ազատեց քեզ, պիտի սկսիս գովել եւ փառաւորել Տէրը: Պիտի

ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ՄԱՏԵԱՆԸ

«Ինձի բերէք Գիրքը», ըսաւ Անգլիացի համբաւաւոր վիպասանը՝ Սըր Ռուլթըր Սքոթ իր մահուան անկողնին մէջ. «Ի՞նչ Գիրք, Տէ՛ր», հարցուցին իրեն։ «Միայն մէկ Գիրք կայ — Աստուածաշունչ Մատեանը,» պատասխանեց։

Արդարեւ անիկա Աստուծոյ Գիրքն է, և կամ Գիրքերուն Աստուածը։ Աշխարհի հոյակապ գրադարանները կը պարունակեն թանկարժէք գիրքեր։ Սակայն այս երկնառաք Մատեանը, Հիմալայա լերանց ամենաբարձր գագաթէն՝ Էվերէսթի նման իր ճերմակ ու յաղթապանծ ճակատը ամենէն վեր կը բարձրացնէ և կ'իշխէ անոնց։ Քրիստոնեայ աշխարհի մէջ ուրիշ օգտակար գիրքեր մարդկային հանճարին խորհուրդներուն, սկզբունքներուն և զգացումներուն թարգմաններն են, իսկ այս՝ Աստուծոյ անհասանելի խորհուրդներուն, Անոր անհուն մտքին, անեզր իմաստութեան, բարի նախախնամութեան և Անոր անպատմելի սիրոյն արտայայտութիւնն է։ Իր մէջ կը պարունակէ այնչափ վսեմութիւն ու գեղեցկութիւն, այնչափ մաքուր բարոյական և այնչափ ազնիւ հատուածներ բանաստեղծութեան և ճարտարախօսութեան, զորս կարելի չէ գտնել դարերու ընթացքին զանազան լեզուներով գրուած ուրիշ գիրքերուն մէջ։ Տանթէ, Միլտոն, Շէյքսպիր և ուրիշներ Ս. Գիրքէն տպաւորուած գրեցին բանաստեղծական հիասքանչ կտորներ։ Միքայէլ Անճէլօ, Ռափայէլ, Բիսիէն և ուրիշներ Ս. Գիրքին երանգապնակին մէջ թաթխելով իրենց վրձինը նկարեցին չքնաղ նկարներ։ Հանտէլի և Մենտէլսօնի նման մեծատաղանդ երաժիշտներ Աստուածաշունչէն ներշնչուած կերտեցին իրենց գերընտիր և հոգեհմայ կտորները։

Ուրիշ գիրքերու միակ նպատակն է կամ հանճարին կայծին փայլման փառասիրութիւնը կա՛մ նիւթական շահ, կամ ոեւէ ակնկալութիւն, կամ մարդկային երեւակայութիւնն ու սիրտը յափշտակել, և կամ շատ-շատ բարոյականի բարձրացումն ու վերասլացումը։ Սակայն այս Մեծ Գիրքին նպատակը ասոնցմէ գերիվեր է և գերմարդկային։ Ժան Ժագ Ռուսօ ըսած է, «Քնեկ փիլիսոփաներու գիրքերը, իրենց պերճաբուք ասացուածքներուն մէջ։ Որչափ ցաւ ու անարգ կը թուին անոնք, երբ Ս. Գիրքին հետ բաղդատենք։ Ս. Գիրքի վեհափառութիւնը կը հիացրնէ զիս»։ Տէքարթ կը բացագանչէ. «Ս. Գիրքի նման ուրիշ գիրք մը եղած չէ եւ պիտի չըլլայ ալ։» Լոք փիլիսո-

---

սկսիս վկայել Տերոջը ողորմութեան համար, եւ ուրիշներ մտիկ պիտի ընեն քեզի, քու ազատութեանդ պատմութիւնը միւս նեղութեան մէջ եղողները պիտի քաջալերէ։ Ուրիշ տառապեալներու հանդէպ պիտի ըլլաս կարեկից որ նախապէս այդ շնորհը կը պակսեր քեզի։ Անկէց զատ երբ ուրիշ նեղութիւններու հանդիպիս աւելի վստահալից պիտի ըլլաս ազատութեանդ համար։ Պիտի ըսես, «Վեց նեղութիւններէն ազատեց, պիտի ազատէ եօթներորդէն ալ»։ Մանաւանդ յաւիտենական դարերու մէջ պիտի փառաւորես բոլոր նեղութիւններէդ ազատող քու Փրկիչդ, Էւ այդ պիտի ըլլայ բոլոր հաւատացեալներուն յաւիտենական երգը։

Խ. Թ. Ս.

փան կ'ըսէ. «Ս. Գիրքը ունի հեղինակ՝ Աստուած, առարկայ՝ յաւիտենականութիւնը, եւ նիւթ՝ անսխալ ճշմարտութիւնը»:

Ի՜նչ երկնային և թանկագին գանձ։ Անիկա Աստուծոյ անհուն, յաւիտենական, սնուցանող, սրբացնող, առաջնորդող, փրկող և երջանկացնող Սէրը կը պատմէ պերճաբարբառ։ Միայն անոր միջոցաւ կը սորվինք թէ Յիսուսի քաւչարար միջնորդութեամբ կրնանք մեզաց ծանր լուծէն ազատուիլ և համարձակութեամբ մօտենալ Աստուծոյ փառահեղ սրբութեանը ներկայութեան՝ իբր ժառանգ յաւիտենական երջանիկ և սուրբ կեանքի։

Այս անզուգական գիրքը կ'ազնուացնէ նկարագիրը։ Կը լեցնէ սիրտը սիրով, յոյսով, քաջալերութեամբ և երկնային գերբնտիր խաղաղութեամբ։ Ցոռետեսը անով միայն լաւատես կ'ըլլայ։ Կեանքը անով միայն կ'արժէ ապրիլ։ Կեանքի ցաւալի պարագաներուն մէջ կը մխիթարէ, փորձութիւններու դէմ կը զօրացնէ։ Երբ մեր սիրելիները կը սգանք, ան մեզի կը նկարագրէ անոնց բնակած երջանկաւէտ և ապահով վայրը, և մեզի կը ներշնչէ անոնց միանալու երանելի յոյսը։ Այո՛, սիրտը ան երկնային ցողով կը լեցնէ։ Դառնութեան և յուսահատութեան ժամերուն՝ հոգիին արծիւի թեւեր կուտայ և վեր կը սլացնէ, վեր, վեր դէպի լոյսերո՛ւ, հմայքներո՛ւ, սիրոյ և երջանկութեա՛ն և հոգեկան ապրումներու աշխարհները։ Քանի՞ վշտացեալ սրտեր անոր բալասանով բժշկուած, մխիթարուած և վերակենդանութիւն ստացած են։ Անօթիին կենաց մանանայ է։ Անով ծարաւը կը յագենայ, վիրաւորը կը բժշկուի։ Այս Սրբազան Մատեանը կը մտնէ մահամերձին սենեակը, և ոչ թէ միայն կը մեղմացնէ անոր ցաւերն ու տագնապները, այլ նաեւ կը փարատէ մահուան վախերը, ժպիտներ կուտայ անոր, աղօթք և երգ անոր շրթներուն։ Մեծահռչակ փիլիսոփաներ յայտնեցին պատուական ճշմարտութիւններ, բայց ոչ մէկը կրցաւ վերցնել ապագայի խորհրդաւոր վարագոյրը և ցոյց տալ յաւիտենական իրականութիւնները։ Ամէն մարդ գերեզմանէն անդին կը նշմարէր սոսկալի խաւար, անստուգութիւն և ոչնչութիւն։ Այս անզուգական գիրքը սակայն, լուսաւորելով գերեզմանը կը փարատէ մահուան երկիւղն ու սարսափը, ան ի լոյս կը հանէ կեանքն ու անմահութիւնը։ Անոր գանձերը անդնելի, անգնահատելի, անսպառելի, ճոխ ու անհատնում են։ Հոգին անոր կը տենչայ, անոր կը յարի, անոր կը կառչի։ Ան է մարդուս քնարը, կեանքը վանդի անոր մէջէն կրնայ տեսնել անհունին սէրը, յաւիտենական վայելքը։

Զարմանալի չէ՞ արդեօք որ այսօր չատեր մերժեն այս փառաւոր Մատեանը։ Ֆրանսացի մեծ երգիծաբանը, Վոլթէռ պարծանքով ըսաւ.

«Թեւ քրիստոնէութեան գիրքը գրելու համար տասներկու մարդիկ պէտք եղան, բայց ես պիտի ցոյց տամ թէ մէկ մարդ կրնայ եղծել զայն», ու գործի ալ ձեռնարկեց։ Բայց նոյն այդ տպագրական մամուլը, զոր ինք կը գործածէր քրիստոնէութեան դէմ իր յարձակումները հրատարակելու, անոր մեռնելէն ետքը Ս. Գիրքը տպելու համար գործածուեցաւ։ Անգլիացի անհաւատ մեծ պատմագէտը Կիպպընս, քրիստոնէութիւնը յաղթահարելու համար գործածեց իր մեծ հանճարը, բայց անոր մահէն ետքը իր տունը գործածեցաւ։

ուեցաւ իբրեւ Ս. Գիրքի մթերանոց, և անոր հասոյթներուն մեծագոյն մասը յատկացուեցաւ շրջաբերութեան համար այն Աւետարանին զոր ինք կ'ատէր։ Վոլթէր և Կիպպընս չատոնց մեռան սարսափի ու յուսահատութեան մատնուած, բայց Ս. Գիրքը տակաւին կանգուն կը մնայ հակայ և անկուն։

Աստուծոյ խօսքին դէմ եղած հակառակութիւնը դադրած չէ։ Այժմ անոր թշնամիները ուրիշ տեսներէ աւելի ճարպիկ, զօրաւոր ու բազմաթիւ են։ Անոնք զայն կատակով կամ ծաղրանքով կործանել չեն փորձեր, այլ իբր թէ գիտական քննադատութեամբ, որով կը յուսան թէ կրնան անոր յայտարարութիւնները հերքել և հեղինակութիւնը հարուածել, ու այս կերպով խախտել շատերուն հաւատքը։ Ոչ ոք կը խորհի որ մինչեւ իսկ այս վերջին աւելի ճարպիկ յարձակումները կրնան Աստուածաշունչի վաւերականութիւնը կասկածելի ցուցնել, ինչու որ, իրենց գործածած ամենաընտիր զէնքերէն՝ գիտութիւնը, Ս. Գիրքը աւելի վաւերացնելու ծառայած է։ Արդարեւ ճշմարիտ գիտութիւնը Ս. Գիրքի ամենամեծ պաշտպանը եղած է։ Ակեպտական դարաւոր բուռն յարձակումներէն ետքը՝ գիրքերուն Գիրքը տակաւին կը մնայ։ Անհաւատներ կը մեռնին անյոյս ու անմխիթար, բայց ան կ'ապրի։ Ծաղրողներ կը թառամին ծաղիկներու նման, ու կ'անցնին խոտի պէս, բայց գերեզմանին վրայէն այս պատուական Գիրքը յառաջ կ'երթայ յաղթական և անոր էջերուն վրայ կը կարդանք լուսեղէն գիրերով, «Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, բայց մեր Աստուծոյն խօսքը յաւիտեան պիտի մնայ»։

ՎԵՐ. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԱՆԿԵՂԾ ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆԸ

«Եղբայրսիրութիւնը հաստատ մնայ, հիւրասիրութիւնը մի մոռանաք, որ նորանով ոմանք առանց գիտենալու հրեշտակներ ընդունեցին։ Եբր. ԺԳ. 1—2։

Եղբայրսիրութիւնը Աստուծոյ որդիներուն սուրբ նշաններէն մէկն է (Ա. Յովհ. Դ. 14)։ Բայց դժբախտաբար դրանումն էլ հաւատացեալները շատ անգամ զանցառութիւններ են գործում. և դա մի պարզ ապացոյց է, որ նրանց դէպի Տէրը ունեցած սէրը պաղած պէտք է լինի։ Անկեղծ եղբայրսիրութիւնը խտրութիւն չի դնում ցած ու բարձր, գիտուն ու անուս եղբայրների մէջ։ Սուրբ Գրքի մէջ չենք տեսնում հաւատացեալների մէջ դասակարգային խտրութիւններ։ Դա Սուրբ Գրքի իմաստին բոլորովին հակառակ կը լինէր, և դրանից է, որ Յակոբը առաքեալը զգուշացնում է մեզ. (Յակ. Բ. 1—6)։

Եղբայրսիրութիւնը խտրութիւն չէ դնում նոյնպէս այլ և այլ յարանուանութիւնների պատկանող հաւատացեալների մէջ, միմիայն նրա համար, որ այդ զանազան դաւանութիւնները թւում են մարդկանար և ո՛չ Աստուծային։ Դրանով սատանան միայն աշխատում է առաւել գրգռումներ և բաժանմունքներ դցել հաւատացեալների մէջ։ Ով որ իր եղբայրսիրութիւնը սահմանափակում է մի միայն այն հաւատացեալներով, որոնք իր սեպհական դաւանութեանն են պատկանում, նա չէ պատկանում Աստուծոյ բոլոր որդիների միութեանը։

Ճշմարիտ եղբայրսիրութիւնը աւելի պարզ յայտնւում է նեղութեան և հալածանքի ժամանակում — Քրիս-

ԳԻՒՂԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

ԲԱՑՕԴԵԱՑ ԺՈՂՈՎՆԵՐ

Երբ ես այդ հանդարտ գիւղը եկայ, սկզբում շատ տրտմում էի տեսնելով՝ թէ ինչպէս դաշտային բանուորներից շատերը երեկոները անց էին կացնում գիւղի գլխաւոր փողոցում գտնուող գինետանը։ Շատ անգամ զարմանում էի, թէ ինչու պէտք է այդ տունը այդքան հրապուրիչ զօրութիւն ունենար մարդկանց վրայ, և իսկապէս նախանձում էի այն ազդեցութեան վրայ, որ գինետունը ունէր գիւղի հասարակութեան վրայ։ Այդ տեղը յաճախողներից մի քանիսի հետ խօսելուց յետոյ իմացայ, որ գինեվաճառ կինը շատ խելօք կին պէտք է լինէր, որ այդպէս արտասովոր յաջողութեամբ կարողանում էր շահել այդ մարդկանց համակրանքը իր տան համար։ Նա լաւ գիտէր, թէ ո՞ր ժամին՝ դաշտի բանուորները տուն վերադառնալիս, պիտի անցնեն իր դրան մօտով, և այդպէս՝ ճիշդ այդ ժամին սպասում էր տան առջեւ և գացողին հրաւիրում էր ներս։ «Յակովբ, կամ Թոմաս, մէկ այստեղ արի, լաւ դօլմա եմ պատրաստել, մտիր ներս և տես ինչ համեղն է»։ Այդ կերպով ներս էր քաշում մարդկանց և ամէն մէկին մի մի դօլմա տալիս։ Ի հարկէ դա մի շատ հրապուրիչ պատառ էր բանուորների համար, որոնք սոված վերադառնում էին դաշտից։ Երբ նրանք այդպէս մի փոքր ուտում էին, խորամանկ կինը մօտենում և ասում էր. »Անշուշտ շատ յոգնած կը լինես. ահա քեզ ջուր, սապոն և երեսսրբիչ։ Հանգիստ լուացուի՛ր բարեկամ, կարիք չկայ շտապել տուն. այստեղ էլ կարող ես փոքր ինչ հանգստանալ։ Ներս մտիր հիւրասենեակը, լաւ կրակ կայ վառարանում, Սամուէլն էլ նստած է այնտեղ. գրոյց կ'անէք ուրախ անց կը կենայ»։ Շատ անգամ մարդիկ հնազանդում էին նրան։ Դօլման ուտում վերջացնում, և ապա լուացւում ու ներս մտնում հիւրասենեակը. այդտեղ էլ աւելի դօլմա էին պահանջում, և ի հարկէ մի բաժակ գարեջուր էլ վրան։ Բայց մի բաժակին հետեւում էին աւելի շատ բաժակներ։ Իսկ խորամանկ կինը բնականա-

---

տոսում եղող եղբայրներն ու քոյրերը քաջալերում և մխիթարում են իրար այդ նեղ օրերում։

Եղբայրսիրութիւնն ու հիւրասիրութիւնը սերտ կապուած են իրար հետ։ Դա չիտակ չէ որ ճանապարհորդ եղբայրները հիւրանոցումը իջնեն, այլ եղբայրների և քոյրերի մօտ։ Այն տունը որ բաց է Աստուծոյ բոլոր ճշմարիտ զաւակների համար, այնտեղ Տէրը անպատճառ առանձին օրհնութիւններ կը տայ և մի հաւատացեալ հիւր իր հետը կը բերէ այդ տունը օրհնութիւններ և հոգեւոր բարիքներ։ Ցիշենք Ղովտին, որ իր տանը ընդունեց ազատարար հրեշտակներին (Ծնդ. ԺԹ. 1—17)։ Ցիշենք և Աբրահամին (Ծնդ. ԺԸ.)։ Նրանք օրինակներ են հաւատացեալների համար, որ հիւրասէրներ լինելով՝ այսօր էլ առանց գիտենալու կարող են հրեշտակներ ընդունել իրանց տներում։ «Եղբայրսիրութիւնը հաստատ մնա»։ Դա պիտի մնայ հաստատ նոյնիսկ այն ժամանակ, երբ տեղ-տեղ շատերը յուսախաբութիւնների են հանդիպել՝ անհաւատարիմ եղբայրներ և քոյրեր ընդունելով։

բար ուրախանում էր, որ իրան յաջողուում էր շատ փող ստանալ և շատ գարեջուր ծախել։

Ես ժողովեցի մեր բոլոր նորադարձ եղբայրներին, միասին աղօթեցինք այդ ինձ շատ անհանգստացնող բանի մասին, և խնդրեցինք Աստուծուն, որ Նա մեզ ցոյց տայ, թէ ինչպէս չահենք այդ մարդկանցը, որոնցից շատերը երբեք ոտ չէին դրել ժողովարանը և հաւանական էր, որ երբեք էլ ոտ չպիտի դնէին այնտեղ։ Տէրը մեր սրտին գցեց ժողովներ անել դրսում, ճիշդ այն հրապարակում, որ գտնուում էր գինետան դիմացը։ Մեր դարձի եկած անտառապահը, որ խոստանում էր օգնել մեզ, խորհուրդ տուաւ մի մութ տեղ ժողովներ անել, ասելով՝ «Այդ մարդիկը կը քաշուեն, եթէ իրանց տեսնող լինի կրօնական ժողովներում, և այդ պատճառով էլ չեն գալ։ Եթէ Նրանց ընկերները տեսնեն իրանց այնտեղ՝ անգութ կերպով պիտի ծաղրեն և Նրանք էլ չպիտի կարողանան այդ նախատինքը տանել»։ Ես այդ իմ գործակիցներից շատերին խնդրեցի որ օգնեն ինձ այդ գործում։ Եւ մենք քառասուն-յիսուն հոգի միասին աղօթելուց յետոյ՝ ուղղակի գնացինք որոշեալ տեղը։ Մենք հետներս միայն մի փոքրիկ լապտեր վերցրինք, որ լոյս տայ մեր փոքրիկ երգեհոնին, որպէսզի մեր նոր դարձի եկած կիրակնօրեայ դպրոցի գլխաւոր վարժուհին կարողանար նոտաները տեսնել։ Սկսեցինք երգել այս յայտնի երգերը առանց երգարանի. «Վէմ հինաւուրց պատառուած», «Յիսուս Փրկիչ Դու իմ Տէրը», «Ե՛կ Փրկչի մօտ», և այլն։ Գինետան տիրուհին այխատում էր մեզ խանգարել, նա համոզում էր իր յաճախորդներին այլևայլ փողոցային երգեր երգել։ բայց շուտով այդ անբարոյական երգերը դադարեցին։ Հիւրերը դուրս եկան մէկը միւսի ետեւից, մօտեցան մեր ժողովին և ականջ դրին երգեցողութեանը։ Յետոյ մեր դարձի եկածները սկսեցին կարճառօտ վկայութիւններ տալ և ասել, թէ ինչպէս էին իրանք նուիրուել Տիրոջը, շատ սրտառուչ էին Նրանց խօսքերը։ Վերջումը ես էլ խօսեցի։ Զուր տեղից էր գինեվաճառուհին գլուխ կոտրում, որ մի կերպով իր մշտական հիւրերին ձեռքից չտար։ Ի զուր էր և նրա բողոքը, ինձ դէ՛, թէ մեր արածը քրիստոնէութեան դէմ էր, թէ մենք իրաւունք չունէինք նրա տան մօտ ժողովներ անել և թէ մենք իր իրիկուայ առեւտուրը բոլորովին խանգարում էինք։ Ի զուր էր նա գանգատւում, թէ նա չնորհիւ այդ բանի կէս տակառ գարեջուր պակաս էր ծախում և թէ դա մի շատ մեծ վնաս էր իր առեւտրին, և ինքն է՛լ չէր կարող պատուով դատիարակել իր որդիներին։ Վերջապէս նա պնդում էր, որ մենք մեր ժողովները ուրիշ տեղ անենք։ Նա երբեմն բարկացած դուրս էր գալիս և մի առժամանակ կանգնում իր դրանը և կարօտալից աչքերով նայում դուրսը մեր շուրջը ժողոված բազմաթիւ մարդկանցը։ Եթէ այդ մարդիկը իր մօտ ժողովէին, անպատճառ մի գիշերում մի ամբողջ տակառ գարեջուր կը ծախէր։ Բայց մարդիկ մնում էին մեզ մօտ։

Շաբաթ շաբաթի ետեւից այդ գինետան դիմաց ժողովների վրայ հրաշալի ազդեցութիւն էր անում հետզհետէ դարձի եկող մարդկանց և կանանց ներկայութիւնը։ Նրանք ե՛ւ հրապարակով դաւանում էին իրանց հաւատքը։ Գործին շատ նպաստում էր և մեր

սրտագին ու ուրախ երգեցողութիւնը։ Ո՜հ, քանի քանի անգամ իմ սրտիս մէջ օրհնում էի Աստուծուն, երբ տեսնում էի գինետունը դատարկ, իսկ մեր մօտ ժողովները օր ըստ օրէ աւելի բազմաթիւ։ Մարդիկ, որոնք ամօթ պիտի անէին գնալ մի որեւէ սենեակում տեղի ունեցող ժողովի, այստեղ հանգիստ կանգնած ուշադրութեամբ ականջ էին դնում, իմանալով որ մութ տեղը ոչ ոք չի տեսնում և չի ճանաչում իրանց։ Եւ այդպէս մեր այդ բացօդեայ ժողովները մեր եկեղեցու գործունէութեան մի յայտնի արդիւնաւոր մասն էին կազմում։ Երբեմն հարիւրից աւել մարդիկ էին ժողովում մեր շուրջը և երբեք չէին յոգնում նորից և նորից լսելու փրկութեան Աւետարանի հին պատմութիւնը, որը պատմւում էր նրանց եռանդուն և ոգեւորուած կերպով։

Բայց մի առժամանակ պէտք է ընդհատէինք մեր բացօդեայ ժողովները։ Ցուրտ քամին ու առատ ձիւնը անկարելի էիս դարձնում թէ խօսողների և թէ լսողների համար շարունակել ժողովները հրապարակի այդ չատ օրհնեալ անկիւնում։ Մի երեկոյ վախուրխելով յայտարարեցի, թէ ձմեռուայ ամիսներում մեր ժողովները տեղի պիտի ունենան ուսումնարանի սենեակում, որը գտնւում է գիւղի միւս ծայրում։ Ես յոյս տուեցի, որ ժողովները ճիշդ այնպէս օրհնուած պիտի լինէին, ինչպէս որ մինչեւ այժմ եղել էին դրսում, որ մեր այժմեան գործակիցները ամէնն էլ սիրով պիտի հրաւիրուէին և այս նոր տեղում շարունակելու իրանց գործը և որ ժողովները որքան կարելի էր կենդանի և հետաքրքիր պիտի դարձնէինք։ Երբ ժողովի ժամը հասաւ, մեծ հետաքրքրութեամբ սպասում էի ուսումնարանի սենեակում և մտածում, թէ արդեօք մարդիկ պիտի գային։ Ցուրտ գիշեր էր. ներսում վառւում էր թէժ կրակը և սենեակը գեղեցիկ կերպով լուսաւորուած էր։ Ժամը եօթուկէսին մարդիկ սկսեցին խումբ խումբ գալ և հինգ րոպէ չանցած սենեակը լիքն էր։ Ո՜րչափ ուրախացայ, երբ տեսայ այդ մարդկանց, որոնք գինետունը թողած եկել էին մեր այս ժողովին եւս։ Սբրտանց գոհացայ Աստուածանից դրա համար։ Նրանք այնպէս էին հաւանել մեր դրսի ժողովները, որ էլ հիմա չէին ուզում ետ մնալ և մեր այս ներսի ժողովներից։ Քանի որ մեր ժողովատեղին լոկ մի ուսումնարանի սենեակ էր և ոչ թէ փառաշէն եկեղեցի, դրա համար էլ ի հարկէ կարող էին գալ և իրանց գործի հագուստով, և գալիս էին։

Ո՜հ ի՜նչ ուրախութիւն էր ինձ համար լսել՝ գինետնից եկած այդ մարդկանց Մուդիի և Սանկէի փառաւոր երգերը երգելիս։

«Տուն ե՛կ, տուն ե՛կ, դու ursով
վաստակած,
Ճամբադ է մթագնած,
Ամայի, միայնակ։
Ով կորած որդեակ, տուն ե՛կ,
Ոհ, տուն ե՛կ, տուն ե՛կ,
Ե՛կ, ոհ, տուն ե՛կ»։

Երկու երեք շաբաթից յետոյ սենեակը բոլորովին լցուեցաւ լսողներով։ Ինչպէս երեւում էր ամէն մի ամօթ և վախկոտութիւն չքացել էր։ մարդիկ և կանայք խումբերով գալիս էին լսելու Աստուծոյ հրաշալի խօսքերը։

Գիւղի բնակիչների թիւը երեխաներով միասին ընդամէնը 350 էր, երբեմն իրիկուայ ժողովներին ուսում-

նարանում ներկայ էին լինում 200 հոգու չափ։ Մենք գործ էինք ածում մեր ամէն նստարանները, աթոռները և ամէն մի կարասիք, որի վրայ կարելի էր նստել. բայց և ամէն անգամ շատ շատերը ստիպուած էին լինում կանգնած մնալ։ Այդ ժողովների ընթացքում շատերը խաղաղութիւն գըտան Յիսուսին հաւատալով, և դա ամէն անգամ էլ մեծ ուրախութիւն էր պատճառում մեզ։ Աստուծոյ Հոգին մուտ գործեց նաեւ այն ազատամիտ ընտանիքի մէջ, որը կամենում էր հէնց սկզբից հեռացնել ինձ այնտեղից։ Կառապանը և նրա կինը, որ արդէն գտել էին փրկութիւնը, ամօթ չէին անում վկայել այդ մասին թէ իրանց տանուտէրի և թէ իրանց միւս համագիւղացի բարեկամների մօտ։

Մեր գիւղի շրջակայքում՝ հեռու ընկած հատ-հատ տներում ապրում էին ընտանիքներ, որոնց վրայ ես առանձին ուշադրութիւն դարձրի։ Նրանցից շատերի համար շատ հեռու էր մեր գիւղը, մանաւանդ ձմեռուայ մութ գիշերները նրանք չէին կարող գալ ժողովարանը։ Կարող էին գալ միայն կառք ունեցողները։ Դրա համար մենք հիմնեցինք մի ընկերութիւն, որը կազմուած էր գլխաւորապէս մեր նոր դարձածներից, որոնք պիտի այցելէին այդ տները։ Ամէն գիշեր լապտերներով գնում էինք և ժողովներ անում գիւղական տների մեծ խոհանոցներում, ուր մեզ ուրախութեամբ ընդունում էին։ Դա միշտ մի առանձին ուրախութիւն էր տալիս ինձ՝ գիշերով գնալ այդ քաջ մարդկանց հետ միասին, որոնք տանում էին ինձ ամենակարճ ճանապարհով այդ տները, այնտեղ վառ և օրհնեալ ժողովներ անելու համար։ Երբեմն քառասունից աւելի հոգիներ ժողովում էին ընդարձակ խոհանոցներում։ Մենք երգում, աղօթում, խօսում և վկայութիւններ էինք տալիս։ Փառաբանում էինք Աստուծոյն և ուրիշներին էլ սիրտ տալիս մեզ հետ միասին Տիրոջն օրհնելու։ Շատ անգամ այդ ժողովները թուում էին մեզ ինչպէս երկինք երկրի վրայ։ Մենք զգում էինք, որ Տէրը մեզ հետ է և որ Նա լցնում է մեր սրտերը երկնային ուրախութիւնով և երջանկութիւնով։ Ի՞նչ ուրախ էինք, երբ ժողովքից վերադառնում էինք տուն և անտառապահը կամ մի ուրիշը լապտերը ձեռքին բռնած գնում էր մեր առաջից։ Ի՞նչ ուրախ էին հնչում մեր երգերը և ի՞նչ արձագանգ էին տալիս գիշերուայ հանդարտ օդում մեր եղանակները, որոնք բղխում էին մեր սրտից։ Իսկապէս երանելի օրեր էին դրանք։ Ճշմարիտ քրիստոնէական սիրոյ, միութեան և հաղորդութեան կապը, որ կապում էր ինձ այդ սիրելի մարդկանց հետ, քաջալերիչ և շատ թանկագին էր ինձ համար։ Այդ ժամանակները միշտ անմոռանալի պիտի մնան ինձ համար։ Ամէն կերպով հետաքրքրութիւն էի ցոյց տալիս նրանց։ Աստուած արժանացրել էր ինձ ականատես լինելու նրանց փրկութեանը։

Այս ես միշտ յիշում եմ թէ ինչ բարի և քաղցր էր Տէրը դէպի ինձ, և այդ յիշողութիւնները դեռ այսօր էլ ուրախութիւն և բախտաւորութիւն են պատճառում իմ սրտին։

Տէրը մեծ օրհնութիւն տուաւ և կալուածատիրոջ տանը։ Տանտիկինը չարունակ ակար էր և չէր կարողանում եկեղեցի գալ։ Ես հարցրի, թէ արդեօք չի՞ կամենալ որ շաբաթը մի ժամ ժողով անեմ նրա տանը։

Նա ուրախութեամբ համաձայ-

նուեց։ Նրանից յետոյ ամէն հինգշաբթի կէսօրից յետոյ տան միւս կանայքը և բոլոր կին ծառայողները հաւաքւում էին կալուածատէրի տիկնոջ սալօնում և մենք ունենում էինք աւետարանչութեան կամ Աստուածաշունչի մի քաղցր ժամ։ Մի անգամ մի ժողովից յետ հարցրի հիւանդ տիկնոջ, թէ ինչպէս է իր հոգու դրութիւնը դէպի Աստուած. նա ասեց որ դեռ վստահ չէ իր դարձի և փրկութեան վրայ։ Երկար խօսեցի նրա հետ. Աստուծոյ խօսքը բացատրեցի և ապաւաղօթեցինք միասին։ Շատ ուրախացայ տեսնելով՝ որ նա մի փոքր երեխայի պէս Տէր Յիսուսին ընդունեց և իր անձը Նուիրեց նրան։ Տիկնոջ ինամող կինը և մի քանի ուրիշ ծառայող կանայք էլ դարձի եկան այդ ժողովներում։ Ինձ քաղցր էր տեսնել, թէ ինչպէս այդ սիրելի տիկինը փաթաթւում էր Աստուծոյ խօսքին և նորա խոստումներին։ Շաբաթներ և ամիսներ շարունակեցի ես այդ ժողովները. և շատ անգամ այցելում էի տիկնոջը և մօտը նստելով՝ երկար խօսում էի այն Աստուածային պատգամի վրայով, որը նա այժմ շատ սիրում էր։ Աստուածաշունչը նրա մշտական ուղեկիցն էր և աղօթքը նրա միխիթարութիւնը։ Ինչպէս ֆերմեռանդ աղօթում էինք միասին նրա ընտանիքի այն անդամների փրկութեանը համար, որոնք գնում էին Աստուծուն օտար ճանապարհներով, և ինչպէս սրտագին կերպով էր նա բերում նրանց անունները Աստուծոյ առաջը։

Քիչ ժամանակից յետոյ նրա հիւանդութիւնը սաստկացաւ, բայց փառք Աստուծոյ, նրա հոգին միշտ աւելի երջանկանում և պայծառանում էր։ Վերջապէս նրա տկար և յոգնած մարմինը չդիմացաւ այլեւս. սակայն նրա վերակենդանացած հոգին թռաւ Յիսուսի մօտ։ Մահուան ժամին կանգնած էի նրա անկողնի մօտ. ինձ համար մեծ միխիթարութիւն էր լսել նրա այս վերջին խօսքերը. «Շնորհակալութիւն Աստուծոյն, իմ փրկութիւնը տեւում է յաւիտեան»։ Նրա հիւանդութեան և նեղութեան օրերում՝ դա էր նրա միակ անպատմելի միխիթարութիւնը— Քրիստոսով կատարուած փրկութիւնը տեւում է յաւիտեան։ Եւ այդ «յաւիտեան է տեւում» խօսքը նրա չրթունքների վրայ նրա ազատուած հոգու հետ միասին սլացաւ երկինք, դէպի իր Փրկչի յաւիտենական բազուկները։ Ես կատարեցի նրա թաղման հանդէսը։ Նրա մարմինը ընտանեկան դամբարանի մէջ ամփոփելիս՝ ներկայ էր մի սգաւոր բազմութիւն։ Իսկ նա արդէն մտել էր այնտեղ, ուր չկան ցաւ, վիշտ ու արտասուք։

Ես ցաւում էի, որ ժամանակը այդպէս արագ թռչում էր։ Իմ այդ տարուայ ստանձնած գործը համարեայ վերջանալու վրայ էր։ Պաստորը ետ դարձաւ իր արձակուրդից աւելի զօրեղացած և կազդուրուած։ Ես կրկին յանձնեցի նրան իր պաշտօնավայրը՝ այդ ամէն իմ սրտին շատ սիրելի դառած մարդկանցով հանդերձ։ Նա սրտանց խնդրեց, որ մի ամիս էլ մնամ իր մօտը, ես էլ ուրախութեամբ մնացի և աւաջնորդում էի բոլոր ժողովները, ինչպէս որ ասել էի նրա բացակայութեան միջոցին։ Վերջումն մի գեղեցիկ ընծայ էլ ստացայ իբրեւ յիշատակ՝ 145 ստորագրութիւններով ամբողջ 100 տնից բաղկացած համայնքից։ Վերջապէս այդ իմ սրտին թանկագին գործունէութեան դաշտը թողեցի։ Ուրախ էի, որ կարողացայ այդ

ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆԾԻ ԳԱՆ

Քրիստոնէական դաստիարակութեան կէտ նպատակն է Փրկչին սոյն խօսքը. «Թող տուէք մանր տղոցը որ ինծի գան»։ Ան ո՛չ մէկ տարբերութիւն կը դնէ մեծին և պզտիկին միջեւ, ամէնը կը կանչէ Իրեն (Մատթ. 11 28, Յովհ. 7:37)։ Ով որ բազում տարիներ փոքրիկներու հետ գործ ունեցած է, ան այլեւս փոքրիկներու անմեղութեան սխալ գաղափարը չի պաշտպաներ։ Ան նկատած ըլլալու է թէ ի՛նչպէս նոյնիսկ տասը և տասներկու տարեկան փոքրիկներու երեւակայութիւնը արատաւորուած և կիրքերը բորբոքած։ Ան տեսած է յամառ փոքրիկներ, որոնց վրայ ամենափոքր ազդեցութիւն անգամ չեն ըներ ո՛չ սիրով լի խրատները ոչ ալ ստատիկ պատիժները։ Ի՞նչ ընելու է այնպիսիները, պէտք է թողո՞ւնք զանոնք իրենց ճակատագրին։ Այդ պարագային զանոնք յանձնած կ'ըլլայինք Սատանային և հռչակած կ'ըլլայինք թէ Յիսուս անզօր է հանդէպ փոքրիկներուն մեղքերուն, և թէ անոնք չունին փրկիչ։ Բայց փառք Տէրոջը, Յիսուս մանուկներուն մեծ բարեկամն է։ Ան կը փափաքի ըլլալ նաեւ անոնց Փրկիչը։ Ան կ'ըսէ, «Թող տուէք այդ մանր տղոցը, և մի արգիլէք ատոնք ինծի գալէն» (Մատթ. 19.14)։

Երանի թէ բոլոր ուսուցիչք և ծնողք որոնց յանձնուած են տղաք և որոնք պատասխանատու են անոնց հոգիներուն փրկութեան համար, պահէին Յիսուսի այդ խօսքը իրենց սրտերուն մէջ, և յաճախ կանգ առնէին անոր առջեւ, մտածէին ու աղօթէին այդ մասին։ Իմ ուսուցչութեան սկիզբի տարիները ես ամէն ջանք ի գործ կը դնէի հաճելի ըլլալու իմ գերադասներուս, որպէսզի անոնք ըսեն — լաւ է մեր ուսուցիչը։ Տղաքը խրատելու համար միայն մէկ միջոց գիտէի—գաւազանը։ Այն ատեն եթէ մէկը ինծի ըսէր թէ իմ նպատակս պէտք է ըլլար տղոց դարձը, ես պիտի ծիծաղէի այդպիսի գաղափարի մը վրայ և պիտի աշխատէի ինձմէ այդ բանը պահանջողէն հանելու այդ գաղափարը միտքէն։ Անտարակոյս անապաշխար մէկու մը համար հրէշային կ'երեւնայ փոքրիկներուն դարձը։ Բայց երբ բացուեցան աչքերս, տեսայ մեղքերս, փնտռեցի և գտայ խաղաղութիւնը Գառնուկին արեան միջոցաւ, սկսայ ուրիշ աչքով նայիլ աշակերտներուս վրայ։ Հասկցայ որ ես օրհնութիւն պիտի ըլլամ անոնց համար։ Սակայն ի՛նչպէս, այս կէտը յստակ չէր ինծի համար։ Ինձմէ հեռու էր այն միտքը, թէ փոքրիկը կրնայ դարձի գալ, այսինքն ճանչնա՛լ իր մեղաւոր վիճակը և թողութիւն խնդրել Յիսուսէն։ Ինքս հաստատ գիտէի որ Յիսուս ներած է ինծի իմ մեղքերս, երջանկացուցած է զիս, և կատարած հրաշալի կերպով իմ բոլոր փափաք-

---

բախտաւոր դրութեան մէջ յանձնել այդ ժողովուրդը տուն վերադարձած պատորին. այժմ եկեղեցին լիքն էր մարդկանցով, որոնցից շատերը արդէն ճշմարտապէս դարձած էին Աստուծուն։ Ես թախանձանօք խնդրում էի Աստուածանից, որ Նա պատորին երկար կեանք տայ շարունակելու Աստուծոյ գործը այդ պարզ և բարեպաշտ ժողովուրդի մէջ։

«Բարի Լուրեն

ներս։ Սակայն մտքէս իսկ չէի անցներ թէ կեանքիս այդ անուշ փորձառութիւնը կրնային ունենալ փոքրիկներն ալ։ Ինձի համար ի՞նչ մեծ ուրախութիւն էր ամէն օր դպրոցէն դուրս ելլելէս ետքը պատմել ուրիշներուն սրտիս յաւելուածէն։ Ո՞րքան ճշմարիտ է այն առածը որ կ'ըսէ, «Մառերուն չատութենէն անտառը չերեւնար»։ Ամէն օր երկար ժամեր կ'զբաղէի պզտիկներուն հետ, որոնց խիղճերը նոյնպէս ծանրացած էին մեղքով, և բնաւ չէի մտածեր թէ Յիսուսի այն հրաւէրը, «Ինձի եկէք ով յոգնածներ և բեռնաւորուածներ» կը պատկանի նաեւ այդ պզտիկներուն։

Թէեւ իմ անձնական փորձառութիւնովս հաստատ գիտէի, թէ Որդւոյն ազատածը ճշմարտապէս ազատած կ'ըլլայ և այդ խորհուրդով կը վարուէի նոյնիսկ գինովներու հետ, հաւատալով թէ Յիսուս միայն կարող է ազատել զանոնք, սակայն և այնպէս չեմ գիտեր ի՞նչ պատճառով ուրիշ կերպ կը մտածէի տղոց մասին, կը կարծէի թէ լաւ ծեծը և գաւազանը միայն կը չակեն զանոնք։

Ո՜հ, ո՞րքան ուրախ եմ, որ նոր յայտնուեցաւ ինձի, թէ Փրկիչը կ'ուզէ փոքրիկներն ալ Իրեն համար։ Եւ արդէն ինձի ցոյց կուտայ անոր պատուղները։ Մեր մէջ առհասարակ կը նկատեն, թէ կրօնի դասերը իբրեւ սերմ են ապագայի համար, բայց ասիկա սխալ է։ Սոյն դասերէն նպատակը պէտք է ըլլայ փոքրիկները արթնցնել, եթէ ոչ անոնք պիտի ունենան այն տպաւորութիւնը, թէ քրիստոնէութիւնը կը բաղկանայ միայն պահանջներէ։ Մնողք պէտք է հոգ տանին որ իրենց զաւակները դարձի գան։ Ոչ թէ միայն աղօթեն որ Աստուած զիրենք Աստուածավախ դարձնէ և պահէ խոշոր մեղքերէ, այլ աղօթեն, որ Աստուած իրենց աչքերը բանայ որպէսզի տեսնեն՝ իրենց մեղաւոր վիճակը և փափաք արթնցնէ անոնց սրտերուն մէջ շնորհքի և մեղքերու թողութեան համար։ Ճանախ ծնողք և ուսուցիչք մեղքի մասին սխալ գաղափար կուտան։ Օրինակ, պզտիկը յանկարծ կը կոտրէ գաւաթ մը, թէպէտ դիտմամբ չըրաւ ատիկա, այսուամենայնիւ անոր համար զինքը կը պատժեն։ Իսկ երբ տղան պարզ սուտ մը խօսի, ասոր համար կը բաւականանան յանդիմանելով։ Արդ, պզտիկը մեղքի վրայ ի՞նչ գաղափար պիտի կազմէ։

Շատ ծնողք կը կարծեն, թէ բաւական է որ իրենք մկրտել տուած են իրենց պզտիկները և ամէն գիշեր քընանալու ատեն անոնց հետ կ'աղօթեն (արդեօք կ'աղօթե՞ն)։ Բայց չեն խորհիր, թէ փոքրիկներն ալ պզտիկ մեղաւորներ են և պէտք ունին ապաշխարելու։ Ի՞նչ մեծ տարբերութիւն կայ այն երկու մայրերու միջեւ, որոնցմէ մէկը միշտ խրատներ կուտայ իր զաւակին որ բարի ըլլայ, մինչ միւսին սիրտը կ'այրի այն փափաքով որ իր զաւակը Յիսուսին գայ։ Առաջինը չատ գոհ կը մնայ երբ իր փոքրիկը հանդարտ կենայ և ամէն իրիկուն իր սորված աղօթքը կրկնէ։ Իր մայրական անփառութեամբ երբեմն նա հիւրերուն քով ալ կ'ստիպէ երախան որ աղօթէ, որպէսզի ցոյց տայ ուրիշներուն թէ ի՞նչպէս գեղեցիկ կ'աղօթէ զաւակը։ Երկրորդ մայրը կ'առանձնանայ իր սենեակը, ծունկի կուգայ կ'աղօթէ, որ Փրկիչը դպչի իր զաւակին սրտին։ Քրիստոնէական ամէն վարժութիւն և սովորութիւն պիտի ծառայեն միայն մէկ նպատակին համար—որ տը

ԱՆԴՐԷԱՍԻՆ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

Իրիկուն էր։ Տան բժիշկը՝ վիրաբոյժին հետ, անսովոր ուշ այցելութիւն մը տուած էր հիւանդանոցին այրերու բաժնին, և այժմ վիրաբոյժը կը պատրաստուէր մեկնիլ երբ կը հանդիպի հիւանդապահուհիին դրան առջեւ։ «Կը ցաւիմ. քոյր, այդ վերի սենեակին մէջ պառկող հիանալի երիտասարդին համար, մինչեւ առաւօտ հազիւ կ'ապրի։ Ցաւալի է, սակայն ը-ստինք մեր լաւագոյնը իրեն համար։»

Սովորական հանդարտութենէն ըսթափելով քոյրը ըսաւ, «Տօքթ. ի՞նչ կ'ըսէք, կարելի՞ բան է։ Դուք իրեն ըսիք որ աւելի աղէկ է, անոր համար ան յոյս ունի որ պիտի ապրի»։

ղաք դառնան Յիսուսի։ Պէտք է ըլլայ օր մը, որ անոնք դարձի գան. ոչ թէ հետզհետէ լաւանան և խելօքնան, այլ մէկ անգամէն փոխուին, ինչպէս որ կը տեսնենք Սբ. Գրքին մէջ նկարագրուած դարձերը, որ տեղի կ'ունենային յանկարծակի և որոշակի։

Քրիստոնեայ զօրավար մը կը գրէ, «Շնորհքը ամէնուն համար է, և տղոց փառաւոր դարձը հաստատ ապացոյցներ են, որ քիչ գիտութիւն և փորձառութիւն ունենալը դարձի համար արգելք մը չեն կրնար ըլլալ։ Շատեր կ'ըսեն, թէ պզտիկները չեն կրնար դարձի գալ, անոնց ծանօթութիւնը և բնաւորութիւնը հասուն չէ ատոր համար։ Սակայն Աստուած տարբեր կը խորհի, Ան կը կանչէ մանկիկը ու կ'ըսէ «Զիս կանուխ փնտռողները զիս կը գտնեն» (Առակ. 8:17)։ (Շար.)

«Արդարեւ կեանքի համար ըրած պայքարը իրապէս մեծ էր, օգուտ մը չկար զինքը վհատեցնելուն մէջ։ Հաւանական է որ քանի մը ժամէն գիտակցութիւնը կորսնցնէ, և երբեք պիտի չհասկնայ մեռնիլը»։ Այս խօսքերով մեծ վիրաբոյժը սանդուխներէն կ'իջնէ վար։

Հիւանդապահուհին պահ մը կը կայնի վարանած, յետոյ կ'ըսէ տան բժիշկին։ «Զէ՞ք ուզեր իրեն հասկցնել, տօքթօր։ Իր բարեկամները հեռաւոր տեղեր կը գտնուին, կրնայ ըլլալ որ կարգադրելիք խնդիր մը ունի, կամ ըսելիք մը։ Ահաւոր բան է մեռնիլ, առանց գիտնալու ստիկա. խօսեցէք իրեն տօքթօր»։

«Զէ, չէ ես չեմ ուզեր ըսել աւելի դիւրին է մեռնիլ իրեն համար եթէ չգիտնայ»։ Յետոյ աւելցուց, «Դուք կրնաք յայտնել իրեն, քոյր, եթէ այդպէս կ'ուզէք»։ «Ուրեմն ես պէտք է յայտնեմ պատասխանեց քոյրը»։ Սակայն կը խորհէր իւրովի թէ ինչպէս պիտի կրնամ ըսել ստիկա, պիտի հաւատա՞յ իմ խօսքերուս. երբ տօքթօրը ապրելու յոյս կը ներշնչէր իրեն, վերջապէս զինքը յուզելէն օգուտ մը յառաջ պիտի գա՞յ։ Սակայն կ'անդրադառնայ նախկին խորհուրդներուն, կարելի է կարգադրելիք բան մը ունի, կամ ըսելիք մը վերջապէս։

Երեկոյեան գործերը կը լրացնէ, յետոյ դանդաղ քայլերով կ'ուղղուի դէպի հիւանդին սենեակը, կը մտածէ թէ ի՞նչպէս հաղորդէ ահաւոր լուրը։ Կ'երթայ աթոռ մը կ'առնէ և կը նստի հիւանդին քովը։

«Շատ ազնիւ էք, քոյր, ինծի հանդէպ որ կրկին այցելութիւն կուտաք ինծի։ Տօքթօրը ըսաւ թէ բաւական լաւ եմ։ Արդեօք ո՞րքան ատեն տա-

կաւին պիտի մնամ հոս։ Հաճեցէք մօտս գրել, քոյր, և յուսադրեցէք զինքը որ պիտի աղէկնամ»։

Հիւանդապահուհին պահ մը կը լռէ, յետոյ կ'ըսէ մեղմօրէն, «Վախնամ թէ Անդրէաս, բժիշկը ճշմարտութիւնը չէ խօսած։ Դուք լրջօրէն վիրաւորուած էք։ Առաջ ամէնքս ալ կը յուսայինք որ պիտի աղէկնաք, սակայն խնդիրը հիմա տարբեր է»։

Այս անգամ երիտասարդին կարգն էր լռել, յետոյ տխրութեամբ և յուսահատութեամբ համակուած՝ կ'ըսէ «Արդեօք ըսել կ'ուզէք որ պիտի մեռնիմ»։ Հիւանդապահուհիին լուրջ դէմքը և այտերէն վար հոսող արցունքի կաթիլները, պատասխանը կուտային իր հարցումին։

Կրկին լռութիւն մը կը տիրէ։ Ինքը զօրաւոր մէկը եղած է, և պատերազմի դաշտին վրայ կրկին ու կրկին մահը դիմագրաւած է, սակայն պարագան այժմ տարբեր էր։ Հիմա հիւանդանոցի սենեակին մէջ գիշեր է, ամէն բան հանդարտ և լուռ, և հանդիսաւորութիւն մը կայ այն ճշմարտութեան մէջ թէ քիչ ատենէն պիտի դիմաւորէ զԱստուած և յաւիտենականութիւնը։ Վերջապէս դողդղացող շրթունքներով հարցուց, «Տակաւին ո՞րքան կեանք ունիմ»։

Հիւանդապահուհին չէր կրնար պահել անողոք ճշմարտութիւնը։ Ասոր վրայ յուսահատական հաղիւ լսելի աղաղակով մը երիտասարդը ըսաւ, «Սակայն ես չեմ կրնար մեռնիլ, քոյր, չեմ կրնար, պարտաստ չեմ մեռնելու»։ Վայրկեանին պահանջած լուրջ հարցումը կ'զարդեցնէր իր միտքը, և կը մղէր զինքը հարցնելու, «Ի՞նչ ընեմ որ փրկուիմ»։

Ինքը ըսած էր բժիշկին որ պէտք է հաղորդուի մահուան լուրը, որովհետեւ կրնայ կարգադրելիք բան մը ունենայ, սակայն ինքը կը խորհէր աշխարհային և ժամանակաւոր իրերու վրայ։ Արդարեւ ան ունի կարգադրելիք բան, սակայն ատիկա կը վերաբերի յաւիտենականութեան։ Ինչ որ կրնար ընել այդ հարցումին որպէս պատասխան սա եղաւ, «Ես չեմ գիտեր, ես փրկուած մէկը չեմ»։ Յետոյ աղաչողի ձայնով մը ըսաւ, «Զէ՞ք ուզեր ինծի համար աղօթել, խնդրեմ աղօթեցէք»։

«Չեմ կրնար, որովհետեւ աղօթել չեմ գիտեր»։

Երկու հոգիներու համար եւս ի՞նչ վայրկեաններ էին։ Երկուքն ալ կորսուած. մէկը մանաւանդ իր վերջին վայրկեաններուն մէջ, մինչ կարեւոր խնդիրը կը մնար չկարգադրուած։

Նըրսը երիտասարդէն նուազ յուզուած չէր։ Յետոյ եկաւ Հոգիէն տրուած խորհուրդ մը Նըրսին և դառնալով ըսաւ երիտասարդին, «Եթէ քեզի համար մխիթարութիւն մը կրնայ ըլլալ Սբ. Գիրքէն կարդալս, կարդամ քեզի»։ Այս թելադրութիւնը երիտասարդին համար եղաւ այն չուանը որ կը նետուի խեղդուողի մը։ «Խնդրեմ կարդացէք, կարդացէք» աղերսեց։

Խեղճ Նըրսը չէր գիտեր ո՛ր տեղէն կարդայ, ո՛ւսկից սկսի։ Գիրքը կը բացուի Յովհաննու Աւետարանէն։ Եւ Նըրսը յստակ ձայնով մը կը կարդայ մէկու մը մասին որ Յիսուսի եկած էր գիշերանց։ Կը կարդայ վերստին ծնունդի, Աստուծոյ սիրոյն մասին կամաց կամաց, յստակօրէն, և հիւանդը եռանդով մտիկ կ'ընէր, ու չանար իր հոգիին պահանջածը ստանալ։ Նըրսը կը շարունակէ կարդալը, կուգայ այնտեղ ուր կին մը զոհացում կը գտնէ ծա-

բաւի հոգիին։ Տակաւին հիւանդը չի կրցաւ ստանալ զինքը գոհացնող խօսքը, և կը փափաքէր որ Ներսը շարունակէ կարդալ։ Վերջապէս Ներսը կը հանի Յովհ. 5:24ին, «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ և կը հաւատայ անոր որ զիս ղրկեց, յաւիտենական կեանք ունի, ու դատապարտութեան տակ չի՛նար, հապա մահուանէ դէպի կեանք անցած է»։ Սոյն հմարը կարդալէն ետքը աչքերը վեր կը վերցնէ, կը տեսնէ երիտասարդին դէմքին վրայ փոփոխութիւն մը։ «Կեցիր հոն, քոյր, լոյսը եկաւ, հիմա կը հասկնամ։ Զիս մինակ ձգէ պահ մը, շուտով նորէն եկուր, չնորհակալ եմ, ո՜հ չնորհակալ եմ»։

Աստուծոյ հետ կը մնայ մինակ կէս ժամ մը։ Երբ հիւանդապահուհին կը վերադառնայ կը տեսնէ որ իր դէմքը կը փայլի։ «Ես Իր խօսքը մտիկ ըրի, կ'ըսէ ան, ես կը հաւատամ Տէր Յիսուս Քրիստոսի որ իմ մեղքերս կրեց, երբ բարձրացաւ, Ան ընդունեց զիս, որպէս մեղաւոր։ Քոյր, հիմա ինձի համար մահ չկայ, այլ կայ յաւիտենական կեանք։ Ան ներեց ինձի իմ մեղքերս»։

Վայրկեան մը հանգստանալէն ետքը կրկին կը խօսի, «Քոյր, կ'ուզե՞ս տեսնել զիս երկինքի մէջ։ Հիմա այլեւս չես կրնար ըսել թէ ճամբան չես գիտեր»։

«Ինձի համար յստակ չէ. քեզի պէս ես չեմ կրնար տակաւին իւրացընել ճշմարտութիւնը կը պատասխանէ Ներսս»։

«Ան գիտէր որ ես երկրի վրայ շատ ժամանակ չունիմ, անոր համար շուտով թոյլ տուաւ որ լոյսը թափանցէ հոգիիս, կ'ըսէ մեռնողը, սակայն քեզի ալ պիտի հասկցնէ։ Ըսէ՛ իմ մօրս, Քրիստոս փրկեց զիս տասնըմէկերորդ ժամուն, խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն»։

Ասոնք էին իր վերջին խօսքերը երբ գիտակցութիւնը վրան էր։ Հետզհետէ դէմքին գոյնը կը փոխուէր, և շատ չանցած, ինչպէս որ վիրաբոյժը գուշակած էր, թեթեւ անհանգստութիւն մը կ'ունենայ և յետոյ խորապէս անգիտակից վիճակի մէջ կ'ինայ արթննալու համար Բարի Հովիւին քովը որ փնտռած ու գտած էր կորսուած ոչխարը։

Կարելի է ընթերցողը կը հարցնէ թէ ի՞նչ եղաւ հիւանդապահուհին։

Թշնամին ամէն կերպ տարակուսանքով և դժուարութիւններով ողողեց զինքը։ Նէ կը զարմանար թէ Անդրէաս ի՞նչպէս փրկութեան վստահութիւնը կրցաւ ունենալ և դիմաւորեց մահը հանդարտօրէն, առանց դոյզն ինչ կասկած ունենալու իր մեղքերու թողութեան վրայ, երբ ինքը կը տուայտէր վախերու և կասկածներու մէջ։ Չէր ըմբռներ թէ երիտասարդ մեռնողը Տէր Յիսուս Քրիստոսի նայեցաւ, իր մեղքերուն համար խաչին վրայ մեռնողին տեսութիւնը ունեցաւ, և ատիկա վայրկեանի մը մէջ փոխեց ամէն ինչ։ Մինչդեռ նէ կը նայէր ինքզինքին, և իր վրայ կը տեսնէր միայն մեղք ու թշուառութիւն։

Այս վիճակին մէջ տարիներ կ'անցնին — չորս ահաւոր տարիներ, երբեմն յուսոյ ճառագայթ մը կը փայլէր, սակայն անոր կը հետեւէր կրկին խաւար և յուսահատութիւն։ Այդ օրերը հիւանդանոց այցելող մէկու մը հետ կը ծանօթանայ, որուն կը բանայ իր սիրտը։ Այս բարեկամը կը հրաւիրէ զինքը տեսնուելու Աստուծոյ պայծառնեայի

մը հետ, և ունկնդրել իր քարոզին։ Այս պաշտօնեան մէկն էր՝ որ Տէրը գործածեր էր զինքը շատ խոտոռեալ հոգիներուն խաղաղութեան համբան ցոյց տալու։

Քարոզը լաւ էր, սակայն իր ցաւին դարմանն չէր։ Միասին կ'ունենան խօսակցութիւն, սակայն կարծես բան մը չէր ազդեր իրեն։ Վերջապէս քարոզիչը կը դառնայ Յովհ. 5:4ին, «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ և կը հաւատայ անոր որ զիս ղրկեց, յաւիտենական կեանք ունի, ու դատապարտութեան տակ չիյնար, հապա մահուանէն դէպի կեանք անցած է»։ Յանկարծ լոյս մը կը ծագի, և ինքն ալ Անդրիասին պէս կ'ըսէ, «Հիմա կը հասկնամ» և խաղաղութիւնը կը լեցնէ իր սիրտը։ Այն խօսքերը որ չորս տարի առաջ երիտասարդը Յիսուսի առաջնորդած էր, այժմ կուտար իր հոգւոյն խաղաղութիւն և ամէն վախ ու կասկած կը փարատէր սրտէն, փառք կուտար Աստուծոյ որ իրեն համար ալ խնդիրը լրացած էր։

«Ահա հիմա է ընդունելի ժամանակը ահա հիմա է փրկութեան օրը (Բ. Կոր. 6:2)։ «Հապա մենք ի՞նչպէս պիտի ազատինք եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը» (Եբր. 2:3)։ Ով ընթերցող, հոգւոյդ փրկութեան խնդիրը լրացած է քեզի համար ալ։ Յովհ. 5:24 համարը Անդրէասին և հիւանդապահուհիին համար ինչպէս իրական էր, քեզի համար ալ իրականն է։

«Յանցանքները ծածկողը յաջողութիւն չի գտներ բայց զանոնք խոստովանողը ողորմութիւն կը գտնէ» (Առակ. 28:13)։

Թարգ. Ա. Թ. Ս.

ԱԲԻԳԻԱՆ

Սուրբ Գրային կիներ երբ կ'ըսենք մեր մտքին կը պարզուին այն կարգ մը գեղեցիկ կենսագրականները, երբեմն շատ ամփոփ, ուր հին ժամանակներու մէջ իսկ, երբ իգական սեռը այդքան աննկատ թողուած էր, տակաւին իրենց բնատուր կարողութիւններով ու առ Աստուած հաւատքով, անոնք կրցին մեծ ծառայութիւններ մատուցանել ու հաւատքի հերոսներու ցանկին անցնիլ։

Առաքեալը կը յիշէ Սառան, որ Աստուծոյ հաւատարմութեանը կը վստահի։ Ռախաբը որ իր տանը փրկութեան միջոց կ'ըլլայ։ Ամէնուն շատ ծանօթ ու սիրելի է Եսթեր թագուհիին պատմութիւնը, որ քաջ և իմաստուն բարեխօսութեամբ, իր ազգին սպառնացող մեծ վտանգէն ազատեց զանոնք։ Անունը անգամ յիշուած չէ այն իմաստուն կնոջ որ Աբէլ քաղաքը իր բոլոր բնակչութեամբ ազատեց Յովաբ զօրավարի վրէժխնդրութենէն Բ. Թագ. 20:16—22։ Տէր Յիսուսի մայրը իրեն ծառայող ու յարութեան աւետիսը բերող կիներ և ուրիշ շատեր։

Այսօր կ'ուզենք մեր ուշադրութիւնը դարձնել գեղեցիկ ու խոհեմամիտ Աբիգիայի, որ ամուսնական օրէնքով թէեւ կապուած էր չար ու դաժան մարդու մը, սակայն իր հոգեկան վեհ զգացումները կրցած էր տակաւին բարձր պահել։ Պատմութիւնը ինքնին այնքան գեղեցիկ նկարագրուած է որ մեզի աւելորդ կը թուի որեւէ բացատրութիւն տալ։ Միայն չենք կրնար մեր աչքերը գոց անցնիլ առանց անկէ հոգեկան կարեւոր դասեր քաղելու։

Ապագայի թագաւորութեան հա-

մար Աստուծոյ խոստումները առած ու ծծուած Դաւիթ, տակաւին մերժուած ու հալածուած էր Սաւուղ թագաւորէն ու Իսրայէլի ազգէն։ Զրկանքներ ու նախատինքներ շատ կրած ու համբերած էր, տակաւին կը համբերէր ու չէր գիտեր մինչեւ երբ։ Բայց այս պարագան ամբարիշտ մարդու մը այս կերպով զինք մերժելն ու անարգելը անհանդուրժելի էր։

Արդեօք նոյնը չէ՞ մեզի համար հոգեւոր կեանքի մէջ. Սատանայի շատ մը փորձութիւններուն յաղթելէ վերջ, պզտիկ դժուարութեան մը փորձութեան մը առջեւ տեղի կուտանք, որովհետեւ այն ատենը շնորհքը մեր մէջ ի գործ դրուած չէր։ Բայց ո՜հ մեր սիրելի Տէրը ինչ զարմանալի միջոցներ կը գործածէ մեր տկարութիւնները արգիլելու ու փորձութեան ժամանակ մեզ պահելու, ինչպէս ըրաւ, Նաբալի ծառային միջոցաւ Աբիգիային իմացնելով ու զայն միջնորդ ու բարեխօս ղրկելով։ Ա. Թագ. 25:14

Աբիգիայի պատմութիւնով այնքան գեղեցիկ կը պատկերացուի մեղաւորին Փրկչին մօտենալը։ Ոչ մէկ անհատ չի փնտռեր փրկութիւն, երբ իր մեղաւոր ըլլալուն գիտակից չէ։ Մր. Ֆինիի քարոզներուն կերպն էր խօսիլ մեղքին կործանարար հետեւանքին ու մեղաւորին սպառնացող վտանգին մասին, ու երբ նկատէր մեղքի բեռան տակ անոնց կրած ճնշումն ու զղջումը, ինչպէս ըրաւ առաքեալի առաջին քարոզիչը Պետրոս առաքեալ։ Գործք. 2:37—38, այն ատեն կը քարոզէր Քրիստոսով ձրի փրկութիւնը։ Վտանգին գիտակից է երբ կ'ըսէ «Մեր Տէրոջը ու անոր տանը վրայ չարիքը հասած է»։Ու կը փութայ ըսել, յետաձգելը մահ է ու կործանում։«Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը»։ Աբիգիայի աղաչանքը որքան յար և նման է խաչին վրայի աւազակին աղօթքին՝ կարճ ու ազդու «Կաղաչեմ քու աղախինիդ յանցանքը (մեղքը) ներէ»։ Հմր. 28։ Գիտէր թէ պէտք էր շնորհք գտնէր Դաւիթի առջեւ թէ ոչ իր առջեւէն գացող ընծաները օգուտ չունէին։ Եւ ինչ պատկառանք ու մեծարանք երբ երեսի վրայ գետին ինկած անոր քաջագործութիւնները կը գովէ ու ապագայ թագաւորութեանը մասին կը խօսի։ Աբիգիա ընդունած էր թագաւորը երբ Նաբալ զայն միայն փախստական ծառայ կոչած էր։

«Քու աղախինդ միտքդ բեր» հմր. 31։ Ցիշուելու գաղափարը որքան սիրելի է. գիտնալ թէ մոռցուած չենք մեր այս կամ այն բարեկամէն մեր սրտին ուրախութիւն է, բայց երբ Աստուածային զարմանալի խոստումը մեր ականջներուն կը հնչէ ու մինչեւ մեր սրտին խորերը արձագանգ կը կը գտնէ, թէ «Ինձմէ պիտի չմոռցուիս», «Բնաւ քեզ պիտի չմոռնամ, չթողում, ու բնաւ երեսէ պիտի չձգեմ», ալ կեանքի ամէն պարագաներուն մէջ վստահութիւն մը ունինք թէ Ամենակարող Տէրը մեզ կը յիշէ։

Դաւիթ կ'օրհնէ Իսրայէլի Տէր Աստուածը որ զինք արգիլեց չարութիւն ընելէ ու կ'աւելցնէ «Քու խոհեմութիւնդ օրհնեալ ըլլայ դուն ալ օրհնեալ ըլլաս»։ Որքա՜ն օգտակարութեան ու բարիքի միջոց կ'ըլլայ խոհեմ և իմաստուն արարք մը, առակախօսը իր չեշտը շատ զօրաւոր կը դնէ այս կէտին վրայ, «Իմաստութիւն ստանալը ոսկիէն որչափ աղէկ է, խոհեմութիւնը ունեցողին կեանքի աղբիւր է», կ'ըսէ։ Կեանքի մեծագոյն

գաղտնիքն է խոհեմ վարուելակերպը ու այդ կ'ստացուի՝ միմիայն Տէրոջը խօսքերուն ու դրած կեանքի կանոններուն հետեւելով։

«Խաղաղութեամբ տունդ գնայ խնդիրքդ ընդունեցի»։ Թշնամութիւնը բարեկամութեան փոխուած է ներումը ստացուած։ Կա՞յ լուր մը որ կրնայ այնքան քաղցր հնչել քան ըսել դատապարտեալին 'Ներուած ես'։ Տէր Յիսուսի ոտքերը արցունքներով լուացող ու մազերովը սրբող Մարիամին ի՞նչ խօսք աւելի քաջալերական պիտի ըլլար։ Արդեօք մինչեւ այդ օր լսա՞ծ էր մէկուն այդքան միսիթարական ու սփոփիչ խօսիլը. երբ Տէրը ըսաւ «Ներուած են ատոր շատ մեղքերը»։ Աշխարհ ու մարդկութիւնը կ'անձկայ խաղաղութեան, ծրագիրներ բանակցութիւններ երբ կը ձախողին, պատերազմի սարսափը կը սարսռացնէ. խաղաղութեան, հաշտութեան տենչը կայ... Պիտի ըլլա՞յ... Ի՞նչպէս...։ Հրեշտակներու խումբը անգամ մը աւետեցին «Յերկիր խաղաղութիւն»։ Բայց ինչու այսքան ուշացաւ. տակաւին պիտի ուշանա՞յ...։

Խաղաղութիւնը Աստուծմէ է զի Աստուած խաղաղութեան Աստուած է։ Իւրաքանչիւր անհատի կարելի է ունենալ զԱյն երբ Տէր Յիսուսի հաւատքով կը մօտենայ։ Առաքեալը կը գրէ Եփեսացիներուն. «Դուք առանց Քրիստոսի էիք... Անաստուած էիք, բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք որ ատեն մը հեռաւոր էիք, մերձաւոր եղաք Քրիստոսի արիւնովը. վասնզի Անիկա է մեր խաղաղութիւնը որ երկուքը մէկ ըրաւ, ու մէջտեղի բաժանող պատը՝ այսինքն թշնամութիւնը իր մարմնով քակեց»։ «Վասնզի Հայրը հաճեցաւ որ Աստուածութեան բոլոր լեցունութիւնը Անոր մէջ բնակի և Անով ամէնը հաշտեցնէ Իրեն հետ խաղաղութիւն ընելով անոր խաչին վրայ թափած արիւնովը։ Կող. 1:19—20

Հիմա անհատական է. բայց ուշ չէ այն օրը երբ Ինք խաղաղութեան իշխանը պիտի գայ Իր թագաւորութիւնը հաստատելու ու «Երկիր Տէրոջը փառքովը պիտի լեցուի ինչպէս ջուրերը ծովը կը լեցնեն»։

«Ամէն եկուր Տէր Յիսուս»։

Պէյրութ ՏԻԿ. ԷՖԹԻՄ ՄԷՐՃԱՆԵԱՆ

ԾՈՎ ՄԸ ԱՐՑՈՒՆՔ

Արցունքնե՜ր... սառած արցունքնե՜ր... լճացած արցունքնե՜ր... խեղդո՛ղ ու անհատնում արցունքներ։

Ամպերը կը խտանան հետզհետէ. երկինք կ'որոտայ... կայծակ... հովը կը փչէ սաստկօրէն. վերջապէս ծանրացած ամպերը կը պատռտին կարծես, ահա՜ տեղատարափ մը. քիչ յետոյ անոր կը յաջորդէ հանդարտ ու խաղաղ անձրեւը։ Փոթորկալից ու անձրեւոտ գիշերուան կը յաջորդէ պայծառ օր մը ձմրան։ Թաց գետինը արեւուն ճառագայթներուն ներքեւ կը շողշողայ բեհեզի նման։ Երկինքի երեսէն թափուած առատ արցունքները կը մաքրեն գետինը ու ջուր կը հայթայթեն ծարաւած դաշտերուն, արտերուն ու պարտէզներուն։

Վիշտը կը ճնշէ սիրտը. լանջքը կ'սկսի ուռիլ. սիրտը կը տրոփէ ուժգնօրէն, կոկորդը կը լեցուի... խեղդող շիթերը կուլ կուտայ անդադար։ Աչքերը կը փայլին լճացած արցունքի շիթերով։ Զսպուած յուզմունքը ի վերջոյ տեղի կուտայ տեղատարափի մը...։

Անշշուկ վար կը գլտորին աչքերէն կայլակները անձրեւին, մարգարտեայ հատիկներու նման, առատ ու լուռ...։

Զգայուն սրտին խորքը՝ անսպառակ մըն է, ուրկէ կը բխին բիւրեղացած ջինջ շիթերը արտասրի։

Արտասրը՝ զովացուցիչն է ներքին թաքուն ծանրակշիռ վշտին կամ սուր պայքարին։

Սիրտը և աչքը իրարու վշտակից և խնդակից ճշմարիտ բարեկամներ են։ Սրտին խորքը վշտի, խիստի գոհարներու գանձարանն է։ Զսպուած, կըլլուած արտասուքներու շտեմարանն է ան։ Երբ ներքին փոթորիկը սաստկանայ, գանձարանէն դուրս կը հոսին շիթերը արտասրի։

Յաղթութեան լեռը՝ խի՛ստ ժայռոտ ու բարձր է։ Վերելքը մեծ զօրութիւն կը պահանջէ։ Ճամբան ծածկուած է անհամար ծաղիկներով, որոնք աճած են մարտիրոսներու, սուրբերու քրտինքի, արցունքի, արեան շիթերէն։ Անցեալի բոլոր հաւատացեալները միեւնոյն ճանապարհէն անցնելով, յաղթութեան դափնիներ ընդունած են, տառապանքի, վշտի, արցունքի անմեռուկներէն շինուած։

Մարտնչող հոգին գիտէ միայն տագնապը պայքարին։ Անոր ճակտէն ու աչքերէն կը թափին ջերմ կաթիլները ու վերջապէս սաստիկ մարտընչումներով յաղթութիւն կը տանի։ Նա աչքերը վեր բարձրացնելով տառապող մեծ Առաքեալին հետ կը կրկնէ. «Գոհութիւն Աստուծոյ. որ միշտ յաղթող կ'ընէ մեզ Քրիստոսով»։

Սրտագէտն Աստուած Իր յաւիտենական գանձին մէջ կը պահէ արժէքաւոր արցունքները։ Անիկա զանոնք մէկիկ մէկիկ կը ժողվէ... Նա գիտէ հոգեկան տագնապը վշտին։ Զղջմա՛ն, ապաշխարութեա՛ն արցունքը, պայքարողին արտասուքը, կորուսեալ, թանկագին հոգիներու փրկութեան համար Շնորհաց Գահուն առջեւ թափուած առատ շիթերը խի՛ստ արժէքաւոր են յԱչն Աստուծոյ։

Լո՞ւռ արցունքներ... զսպուած արցունքնե՛ր... Արարչին ամենատես աչքերուն առջեւ թափուած անգին շիթեր... Ջերմ ու դառն արտասուք, աղի շիթեր...

Արդարութեան Աստուածը Իր խոստման համաձայն ցնծութեան ու յաղթութեան երգերու պիտի վերածէ հառաչանքները, իսկ վշտի, տուայտանքի արցունքները, ուրախութեան ու խընդութեան։ Նա Սաղմոսերգուին հետ պիտի կրկնէ ցնծութեամբ, «Իրիկունը լաց կայ, բայց առտուն ուրախութիւն»։

«Անոնք որ արցունքով կը ցանեն, ցնծութեամբ կը հնձեն։ Ան որ լալով կ'երթայ, ցանելու սերմը տանելով, անշուշտ ցնծութեամբ ետ պիտի դառնայ, իր ցորենի խուրձերը բերելով»։ ՃԻԶ. Սաղ. 5, 6։ Գոհութի՛ւն Տէրոջ։

ԲԻՒԶԱՆԴՈՒՀԻ Գ. ԵՍՐՏԷՄԵԱՆ
Երուսաղէմ

ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ ԵՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ը.

Համրուած օրեր կարճ կ'ելլան, և մեր արձակուրդի օրերը համրուած օրեր էին հետեւաբար շուտ վերջացան։ Երուսաղէմը՝ որ մեր վերջին հանգրուանը եղաւ, թողուցինք 17 Սեպ. ժամը 3ին, պաղեստինեան ժամով։ Կառախումբ նստած կ'ուղղուինք դէպի

Լիւդդեայ։ Շոգեկառքը նախ վայրէջք մը կ'ընէ, յետոյ քանի մը ժամ կ'անցնի խորունկ ձորերու մէջէն, ալ ու ձախ ունենալով լեռներ մշտադալար ծառերով։

Երուսաղէմ ծովու մակերեսէն 2600 ոտք բարձր է։ Շուտով 600 ոտք իջած ենք։ Քիչ յետոյ լեռները կը ձգենք մեր ետին և մենք կ'ելլենք ընդարձակ դաշտ մը, ո՛ւր Սամփսոն կատարեց իր չհատակութիւններն ու արկածախնդրութիւնները։ Իր ոդիսականը Փղշտացի կիներու հետ այդ վայրերու մէջ տեղի ունեցած են։ Ժամանակ մը կար, որ Փղշտացիք Պաղեստինի մեծ մասին վրայ կը տիրէին, ահա թէ ինչո՛ւ ամբողջ երկիրը այդ անունով յորջորջուած է ցայժմ։

Դաշտերը բերրի են հոս ալ, սակայն պէտք ունի արդիական միջոցներու աւելի արդիւնաբեր դառնալու։ Հոս կը գտնուէր Ակկարոն, Փղշտացւոց հինգ մեծ քաղաքներէն մէկը։ Ընթերցողը կարդալով Ա. Թագ. 5:10—13, 7:12—15 և 17:50—52 համարները պիտի տեսնէ, որ կարեւոր դէպքեր տեղի ունեցած են այդտեղ։

Արդէն մթնցած էր երբ հասանք Լիւդդեայ, ո՛ւր սպասեցինք Եաֆայէ գալիք կառախումբին մեզ տանելու Եգիպտոս. մեր մեկնակէտին։ Ամբողջ գիշերը անցանք անապատային ճամբէն կէս քուն կէս արթուն, կարելով 301 ք. մ. ճամբայ։ Հանգիստ քնանալ անկարելի էր, երբ երբեմն կը մրափէինք, ատ ալ կը խանգարուէր անդադար քննիչներու կողմէ, որոնք կուգային մեզմէ մեր անձագիրները պահանջելու։

Լուսաբացին կը հասնինք Քանթարա, Եգիպ. սահմանագլուխ։ Քանթարա կը նշանակէ կամուրջ, հոնկէ է որ անցան Աբրահամ և Յովսէփ Եգիպտոս մտնելու և ետքէն բոլոր Իսրայէլի սերունդը, առանց անձագրի անշուշտ։ Յետոյ սրբազան ընտանիքը անցաւ այդ տեղէն փախչելու Եգիպտոս երբ Հերովդէսի կողմէ ծրագրուած էր Բեթլեհէմի երկու տարեկանէն վար մանուկները ջարդել տալ։

Կը հասնինք Աղեքսանդրիա և մեր տունը կէսօրին, և կը փառաբանենք Տէրը որ խաղաղ ու ապահով վերադարձուց մեզ մեր տունը և սիրելիներուն։

Խօսելու պատեհութիւնը ունեցանք Զահլէի, Այնճարի և Երուսաղէմի հայ Աւետարանական բեմերէն։ Մեր այցելած տեղերուն մէջ տեսնուեցանք նոր և հին բարեկամներու հետ, հաճելի էր մեզի Տէրոջը զաւակներուն հետ հոգեկան հաղորդակցութեան մէջ մտնել։ Ամէն տեղ Տէրը ունի Իր ժողովուրդը։ Ինչ որ նկատեցինք այն էր՝ թէ հոգեւոր թոյլ վիճակը կը տիրէր գրեթէ ամէն տեղ։ Ամէն տեղ մեծ կարիք կայ Հոգիին հզօր և կրակով այցելութեան։ Տէրը տար որ չուտ գայ այդ օրհնեալ օրը, ամէն։

Վերջ Խ. Թ. Ս.

Ողորմելի է այն մարդը որ հարուստ է աշխարհի մեծութիւններով բայց աղքատ է հոգեւորապէս։

Զգուշացիր այն բարեկամէդ որ թշնամիդ յանախորդն է։

Աղքատը շատ բանի կը կարօտի, բայց ագահը ամէն բանի։

Բարկութեան սկիզբը յիմարութիւն է, իսկ վերջը զղջում։

ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

'ՀԱԿԱՌԱԿ ՈՐԴԻՆԵՐ'

Գլուխ Ը.

«ԵԼԱԻ, ԻՐ ՀՕՐԸ ԵԿԱՒ»

«Ինք քիչ մը լացաւ, վանդի արցունքներն զգացի երեսիս վրայ։ Ապատարաւ զիս Թոմիի քով։ Մաքսուէլ բացակայ էր, և Թոմի խոհանոցն էր անոր մեծ վերարկուներէն մին հագած։ Սեղանին վրայ խոզի միսով նախաճաշ կ'ընէր։ Զիս տեսնելով ոտքի ելաւ. աղուոր, խոշոր մարդ մըն է, բայց մազերը կարելու պէտք ունի։ Իրարու ձեռք թօթվեցինք և ըսի թէ շատոնց ի վեր իրեն կ'սպասէինք։ Ամչցաւ կարծես, բայց նախաճաշը լմնցնելէն ետեւ շատ հաճելի տեսակցութիւն մը ունեցանք։ Տիկին Մաքսուէլ ճաշի համար պատրաստութիւն կը տեսնէր։ Թոմի իր պատմութիւնն ըրաւ սկիզբէն սկսելով, բայց ամէնը միտքս չմնաց։ Բնաւ խոզ չէ պահեր, այլ ոչխար միայն—այն ալ Ամերիկայի մէջ—երկաթուղիի բանուոր եղեր է։ Ջերմէ բռնուեր և յետոյ գէշ ընկերներ ունեցեր է։ Վերջապէս Լոնտոն եկեր, հանրակառքի պաշտօնեայ եղեր է. յետոյ կառապան, և գարեջուր խմելով բոլոր դրամն սպառեր է։ Եւ ամօթէն նամակները դադրեցուցեր է։ Յետոյ կառքը լմբարի սիւնի մը զարնուելով ջախջախուեր է և նորէն սկսեր է խըմել։»

«Պէտք չկայ անոր չարութիւնները պատմելու,» ըսաւ Սըր Էտուըրտ չոր կերպով։

«Բայց կը տեսնես, բարի ըլլալէն առաջ շատ չար եղեր է, ինչու որ անառակ որդի էր։ Հիմա կը զղջայ։ Կ'ըսէ թէ երբեք տուն պիտի չգար մինչեւ բարի մարդ մը ըլլար։ Սակայն կիրակի իրիկուն մը փողոցին մէջ քարոզող մարդու մը մտիկ ընելով անհանգիստ եղաւ։ Յետոյ խրատուեցաւ —ըսէ. տեսնեմ—որո՞ւ կողմէ։»

Սըր Էտուըրտ չէր կրնար գուշակել։ Ուստի Միլի շարունակեց հպարտութեամբ, «Ձէքի՜ կողմէ. Ձէքի՜. որ ըսաւ անոր թէ ինք ալ անոր պէս էր, և հիմա Թոմի Մաքսուէլ մը կը փնտրուէր։ Զարմանալի չէ՞ որ այդ պահուն իսկ Թոմի Մաքսուէլի կը խօսէր։ Թոմի անոր ըսաւ թէ տուն երթալու երես չունի մինչեւ լաւ մարդ մը ըլլայ ինք։ Բայց Ձէք անոր ըսաւ որ օր մը իսկ չսպասէ. ինչու որ հայրն ու մայրը անոր կ'սպասեն։ Զարմանալի է որ Թոմի երկու շաբաթ ալ սպասեց և անկէ ետքը որոշեց տուն գալ։ Խենթ չէ՞ ան, մօրեղբայր։»

«Շատ։»

«Խելքս չհասաւ ասոր։ Բայց դայեակը կ'ըսէ թէ այսպիսի շատեր կան։ Կ'սպասեն որ բարի ըլլան փոխանակ վազել գալու ի՛նչպէս որ են։ Կ'ըսեն անառակ որդիներէն ոմանք այսպէս կ'ընեն. շա՞տ են անոնք, մօրեղբայր։»

«Բաւական շատ։»

«Թոմի ըսաւ որ թէեւ շատ կը փափաքէր իր տունը տեսնել, բայց շատ կուուեցաւ ինքզինքին հետ մինչեւ որ եկաւ։ Ես չէի գիտեր թէ անառակ որդիներն այդչափ դժուարութիւն կը կրեն։ Սր. Գրոց մէջինը չկրեց՝ անգամ մը որոշելէն ետեւ։ Վերջապէս Թոմի կայարան երեւցաւ։

— Կը ցաւիմ որ կառախումբով եկաւ։ — Բայց Ճէքի մօրեղբայրը վճարեց տոմսակը։ Ես կ'ուզէի որ վազէր ամբողջ ճամբան։»

«Ինչո՞ւ այդպէս կ'ուզէիր,» հարցուց Սբր Էտուըրտ ժպտելով։

«Կարծեմ աւելի վայելուչ կ'ըլլար,» ըսաւ աղջիկը ծանրութեամբ, գլուխը քիչ մը մէկ կողմ ծռելով, մինչ մտածկոտութեամբ կը դիտէր կրակը։ «Ես միշտ ամբողջ ճամբան կը քալեմ կամ կը վազեմ, երբ անառակ որդի կը խաղամ։ Առաջ ծանր կը քալեմ, որովհետեւ ճամբան երկար է, բայց երբ կը մօտենամ, կ'աճապարեմ։ Երբ կը տեսնեմ տունը, կ'ուզեմ հոն ըլլալ։ Անառակ որդին կառախումբ չնստաւ, և կարծեմ Թոմի ալ կրնար առանց կառախումբի գալ։»

Այս վերջին խօսքին յանդիմանական շեշտը մօրեղբօր ծիծաղը շարժեց։ «Կը վախնամ որ Թոմի քեզ յուսախաբ ըրաւ,» ըսաւ։ «Կայարանէն ալ կառք բռնե՞ց։»

«Ոչ, չբռնեց։ Կէսօրէ ետքը տուն հասաւ։ Մաքսուէլ իր հրացանը կը մաքրէր դրան սեմին վրայ և շուք մը տեսնելով վեր նայեցաւ, և ահա Թոմին գտաւ։ Ո՞րչափ կ'ուզէի հոն գըտնուիլ այդ ժամուն։ Կը ցաւիմ որ Մաքսուէլ անոր պարանոցին վրայ չինկաւ, և չհամբուրեց։ Թոմիի հարցուցի ուշադրութեամբ, և ինք ըսաւ թէ իր երկու ձեռքերը բռնեց ու սեղմեց և պոռաց։ Տիկին Մաքսուէլ լուացք կ'ընէր ետեւի գաւթին մէջ և լսելով այնչափ ցնցուեցաւ որ հազիւ կրնար քալել։ Թոմին տեսնելով այնչափ լացաւ որ Մաքսուէլ ստիպուեցաւ կռնակը շոյել և գաւաթ մը ջուր տալ։ Թոմի նստաւ աթոռակի մը վրայ գաւթին մէջ և ըսաւ ճիշդ սա բառերը, մօրեղբայր։ 'Ես արժանի չեմ տուն գալու։ Ես նախատինք եմ ձեր անունին'։ Եւ տիկին Մաքսուէլ — Թոմի ըսաւ ինծի — իր երկու ձեռքին մէջ առաւ անոր գլուխը և քաշեց իրեն, յետոյ ծռելով համբուրեց զայն ու ըսաւ, 'Զաւակս, որո՞ւ պիտի երթաս երբ նեղութեան մէջ ես դուն, անշուշտ քու հօրդ ու մօրդ'։»

«Թոմի ինծի պատմելու ատեն ըսաւ, 'Օրիորդ, այս խօսքը սիրտս կըտոր կտոր ըրաւ', և սկսաւ լալ։ Եւ ալ լացի։ Յետոյ տիկին Մաքսուէլ վեր եկաւ։ Ձեռքերն ալիւրոտ էին, ինչու որ խնձորի փուտինկ կը շինէր։ Ինք ալ լացաւ մեզի հետ։ Թոմի գլուխը մէկ կողմ դարձուց և ձեւացուց թէ չէր լար։ Բայց ես տեսայ որ կուլար։

Չէի գիտեր թէ անառակ որդիները տխուր կ'ըլլան երբ տուն գան, բայց Թոմի շատ տխուր էր, զիս ալ տխրեցուց։ Թոմի ինչո՞ւ կուլար, մօրեղբայր։»

Սբր Էտուըրտ չպատասխանեց։ Կրակին կը նայէր երազանքով։ Փոքրիկ քեռաղջկան գորովին նման բան մը կարծես իր ալ դէմքին վրայ կը ցոլար։ Պահ մը լուռ մնալէ ետեւ ըսաւ յանկարծ.

«Ի՞նչ կ'ըսես, աղջիկս։ Լմնցա՞ւ պատմութիւնդ։»

«Ոչ, ոչ, մօրեղբայր։ Զանձրացա՞ր արդեօք։ Դայեակն ըսաւ որ պէտք չէ յոգնեցնեմ քեզ։»

Սբր Էտուըրտ խնդաց, բայց ոչ ուրախութենէն։

«Էհ, լմնցուր։» Եւ Միլի շարունակեց.

«Ամէնս ալ զուարթացանք, երբ տիկին Մաքսուէլ զիս ճաշի հրաւիրեց։ Հարցուցի թէ խնճո՞յքն է, և խնդալով 'Այո՛' ըսաւ։ Ուզի զիստ մը դրած

էր փուռը խճողածով և խնձորի համեմով. ի՞նչ աղուոր էր, մօրեղբայր։ Մաքսուէլ ճիշդ ժամանակին եկաւ և երջանիկ էր։ Ամէնս սեղան նստանք։ Ես ուզեցի որ Մաքսուէլ նախ ըսէ, 'Ուտենք և ուրախ ըլլանք, վասնզի այս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցա՛ւ։ Ան ծալեց իր ձեռքերը և ըսաւ աղօթքի պէս։ Տիկին Մաքսուէլ ամէն ըսաւ և աչքերը սրբեց գոգնոցով։ Ես ըսի թէ ամէնս ալ պէտք է ուրախ ըլլանք, բայց կը վախնամ որ Թոմի չեղաւ ուրախ։ Ան նախ տիկին Մաքսուէլի, յետոյ խոհանոցին և Մաքսուէլի կը նայէր և ապա մեծ մեծ կը հառաչէր։ Կ'ըսէր թէ չէր կրնար հաւատալ թէ տուն եկած է, բայց երբ յետոյ ես հարցուցի, ըսաւ թէ երջանիկ է իրօք։ Կը հառաչէր ու կը տխրէր անոր համար միայն որ այնչափ ժամանակ հեռանալու խենթութիւնն ունեցաւ։ Ես միայն մէկ բանի համար կը ցաւիմ, մօրեղբայր։ Լաւագոյն հագուստն հագած չէր։ Իրեն պզտիկ եկած էր, և մուճակները ոտքին չէին յարմարած։ Բայց Մաքսուէլ կ'ըսէ թէ վաղը նոր պիտի առնէ։ Եւ Թոմի ինձի ըսաւ թէ ինք մատանի չդներ, եթէ ունենայ ալ։ Հարցուց թէ ինչո՛ւ դնէ, ես ալ անառակ որդին դրաւ ըսի։ Ինք թիրեց պատմութիւնը, և ըսաւ թէ ինք անոր նման է ճիշդ։ Յետոյ նուագ և պար հարցուցի։ Կ'ուզէի որ ըլլային ատոնք։ Բայց կարելի չէր ունենալ։ Տիկին Մաքսուէլ ըսաւ թէ նուագը մեր սրտին մէջ է, այդ ի՞նչպէս կ'ըլլայ, մօրեղբայր։ Ես նուագ չլսեցի սրտիս մէջ, ինչու որ լուռ կեցայ և մտիկ ըրի։»

«Կարծեմ ըսել ուզեց թէ այնչափ ուրախ էիք որ աւելի ուրախանալու համար նուագի պէտք չունէիք։»

«Ո՜հ, շատ ուրախ էի, մօրեղբայր։ Ինչո՞ւ տուն չեն երթար բոլոր անառակները։ Ես չեմ հասկնար թէ ինչո՞ւ կ'ուզեն հեռու մնալ։ Ո՞րչափ սիրուն է Թոմիի վիճակն հիմա։ Ամէն տուն դարձող նոյնչափ երջանիկ պիտի ըլլա՞յ։»

«Չեմ կարծեր որ ամէն երիտասարդ Թոմիի ծնողաց պէս զաւակասէր ծնողք ունենայ։»

«Զուարթն, մօրեղբայր։ Աստուծոյ անառակները չեն կրնար աւելի պատուական Հայր ունենալ։ Անկողնիս մէջ պառկած անոնց վրայ կը մտածեմ երբեմն և Աստուծոյ կը խօսիմ անոնց վրայ։ Ո՞րչափ ուրախացայ ես երբ ճէք Անոր դարձաւ։ Գէշ բան է Աստուծմէ հեռու մնալ, ինչու որ կը սիրէ զանոնք։ Արդեօք չե՞ն գիտեր թէ պիտի ընդունի զիրենք։ Թոմի, մինչեւ եկաւ, կը վախնար թէ հայրը իրեն պիտի բարկանայ։ Ես կ'ուզեմ որ անառակ որդին վազելով երթայ Աստուծոյ գիրկը։ Բայց կ'երեւի թէ շատ ծանր կ'երթայ, միայն թէ հրեշտակները վերէն կը նային ու կը դիտեն։»

«Հիմա ի՞նչ պիտի ընէ այս փախստականը։ Հօրն ու մօրը բե՞ռ պիտի ըլլայ թէ պիտի աշխատի պարկեշտ գործ մը ընել։»

Սըր Էտուըրտի ձայնը բաւական խիստ էր։ Միլի զարմացմամբ վեր նայեցաւ։

«Թոմիի համար կ'ըսես, մօրեղբայր։ Բարկացա՞ր անոր։ Ինձի ըսաւ թէ անմիջապէս գործ պիտի փնտռէ, և Մաքսուէլ վաղը քեզի պիտի գայ անոր վրայ խօսելու համար։»

«Կարծեմ փոխ պահապանի պաշտօն պիտի ուզէ անոր համար,» ըսաւ Սըր Էտուըրտ դժգոհութեան զգացումով։

Գլուխ Թ.

ՊԶՏԻԿ ՏՂԱՅ ՄԸ ՊԻՏԻ ՔՇԵԼ ԶԱՆՈՆՔ

Երբ այն իրիկուն իր սենեակը քաշուեցաւ Սբր Էտուբրտ, պահ մը վեր վար քալեց այն նկարին առջեւ զոր փոքրիկ քեռաղջիկը տուած էր իրեն։ Ցօնքերը պռստած էին և շատ կը մտածէր։

«Ես խաղաղութեան կարօտը կը քաշեմ,» մրմնջեց, «ինչո՞ւ չեմ կրնար զայն գտնելու որոշումը տալ։ 'Ելլեմ' — այո, դիւրին է ըսել — բայց մոլորածի մը համար դժուար և դառն բան է դառնալ։ Պզտիկը երբեմն ի՞նչպէս կը խոցէ զիս. ո՞րչափ քիչ տեղեակ է իմ անցեալիս։»

Կեցաւ ու պատկերը դիտեց։ «Եւ Տէրն ինք իբր օրինակ գործածեց զայս։ Աւելի զօրաւոր բանի մը պէտք չունիմ։»

Խոր հառաչ մը արձակեց, ապա արտէն սա աղաղակը ելաւ երկինք. «Աստուած ինծի ողորմի՛ և զիս դարձի բերէ, վասնզի ես զիս չեմ կրնար բերել։»

Հետեւեալ առաւօտ Սբր Էտուբրտ տեսակցութիւն մը ունեցաւ իր պահապանին հետ, որ որդին բերած էր։ Եւ երբ բարձրահասակ ու թիկնեղ երիտասարդը կեցաւ պարոնին առջեւ ու խոնարհաբար խնդրեց որ իրեն բարեկարգուելու առիթ մը տայ՝ աշխատցնելով զինք իր կալուածին մէջ, Սբր Էտուբրտի խստութիւնը թուլցաւ և երկար խօսակցելէ ետեւ խոստացաւ փորձ մը ընել։ Հայր ու որդի երախտագիտական ջերմ խօսքերով հրաժեշտ առին։ Իսկ ինք ժպտեցաւ դժկամակօրէն։

«Այս է ուրեմն պզտիկին հերո՞ը, որու օրինակին ես ալ կրնամ հետեւիլ։ Քաջութիւն ունեցած է վերջապէս այն քայլն առնելու, որմէ դեռ կը քաշուիմ ես։ Ինչո՞ւ պիտի վախնամ թէ ես նուազ սիրով ու ներումով պիտի ընդունուիմ երբ դառնամ։»

Մնունդի նախօրեակն էր, փոթորկալից օր մը։ Քամին անդադար կը մռնչէր տան շուրջ, ծխնելոյզներէն վար գոռալով և դուրսի ծառերուն ճիւղերը պատուհաններուն զարնելով։

Միլի ժամելով օգնած էր Ֆորտի, որ կանաչներով կը զարդարէր տան սենեակներն ու նրբանցները, թէեւ երբեմն կը կենար ու կ'ըսէր, «Օրիորդ, ի զուր կ'աշխատինք, եթէ տունը լեցուն ըլլար մարդով կամ հիւրով, պիտի հպարտանայի իրօք, բայց չեմ կարծեր որ պարոնը նշմարէ թէ զարդարուա՞ծ է թէ ոչ։ Ինծի կուգայ թէ հետզհետէ կը քաշուի ընկերութենէ։ Մնունդը մեզի զուարթութիւն չբերեր։»

Վերջապէս լմնցաւ ամէն բան և Միլի սենեակն երթալով կեցաւ պատուհանը և իր պայծառ սեւ աչքերով ուշադրութեամբ զննեց դուրսը գտնուող ամէն առարկայ։

«Կատարեալ մրրիկ է,» ըսաւ դայեակն հիմա, ձեռագործն առնելով և կրակին առջեւ իր աթոռին վրայ բազմելով։ «Եթէ ցամաքի վրայ այսպէս է, ի՞նչ պիտի ըլլայ ծովու վրայ։»

«Ես պիտի ուզէի ծովու վրայ ըլլալ,» յարեց Միլի։ «Կը սիրեմ հովերը, բայց քիչ մը շատ խիստ է այս իրիկուն։ Կը վախնամ որ ՀԷսաէ պզտիկ ծառերուն։ Ֆորտ ըսաւ թէ եթէ դուրս ելլես, հովը կը հրէ կը տանի քեզ։ Կը կարծե՞ս, դայեակ, թէ հովը կրնայ զիս երկինք տանիլ, եթէ շատ, շատ զօրաւոր ըլլայ։»

(Վերջը յաջորդով)

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷ

Ապագայ ամուսնութիւններ. — Եորքի արքեպիսկոպոսը կը նախատեսէ, թէ շատ չանցած Մեծն Բրիտանիոյ մէջ բոլոր ամուսնութիւնները պիտի կատարուին ձեռամբ քաղաքական իշխանութեանց։ «Ամուսնութիւնը, կ'ըսէ ան, չի նկատուիր ժողովուրդին կողմէ որպէս խորհուրդ՝ սրբազան միութեան, այլ պարզապէս պայմանագրութիւն մը երկու կողմերու կողմէ կատարուած որ շատ հեշտօրէն կրնայ կոտրուիլ փոխադարձ համաձայնութեամբ մը»։

*** Պարզ մը բաղդատութիւններ.— «Գրիչը Օպզրվը» կուտայ հետեւեալ բաղդատութիւնները. — Պատերազմի համար ծախսուած է 87 միլիառ տոլար։ Մնայուած և դրամատուներու մէջ պահ դրուած՝ 40 միլիառ։ Շուայլուած և դրամախաղերու համար վատնուած՝ 10 միլիառ։ Ամիչքի համար՝ 7 միլիառ, զանազան բաներու՝ հինգ ու կէս միլիառ. ծխախոտի՝ մօտ 3 միլիառ։ Օծանելիքի՝ մօտ երկուք ու կէս միլիառ. իսկ եկեղեցիին և բարեգործ նպատակներու՝ մէկ ու կէս միլիառէն քիչ մը աւելի կը ծախսուին։

*** Բոլոնիոյ մէջ Լուսերականներու կորուստը.— Բոլոնիոյ մէջ Լուսերականները իրենց կէս միլիոն անդամներէն միայն քառորդը մնացած ըլլալուն՝ ամենէն շատ հարուածուածն է։ Իր ունեցած 140 հովիւներէն կէսը զրկուած են կեդ. կոչաններ, 23ը մեռած են։ Այժմ 58 հոգի կը մնան գործի վրայ։

*** Հաւատարիմ հեթանոսներ. — Օդային պատերազմի մը ժամանակ գերման 18 տարեկան նացի երիտասարդ մը վար կ'իջնայ. ջախջախուած՝ իր կրակ առած օդանաւովը միասին։ Հազիւ թէ ինքզինքը դուրս կը հանէ կ'իջնայ ուշակորոյս մինչեւ որ կուգան կարմիր խաչի պաշտօնեաները և կը գտնեն զինքը այդ վիճակին մէջ։ Անոնց օգնութեամբը երիտասարդը ճիգ մը կ'ընէ ոտքի կանգնելու և փշրուած ձեռքը ցաւագինօրէն վեր կը վերցնէ նացիական բարեւի և սրբենոտած յրթռունքներով կ'աղաղակէ, «Իմ գործս կատարուած է, Հէյլ Հիթլէր» և կ'իջնայ անշունչ։ Այսպէս ան ցոյց կուտայ եզակն հաւատարմութիւն իր հաւատքին՝ մինչեւ վերջին շունչը։ «Կեղծ աստուածներու, յիմարական դաւանանքներու համար ցոյց տրուած անօրինակ հաւատարմութիւն մը մեզ ամօթով կը ձգէ» կ'ըսէ սոյն պատմութիւնը ընող Զարլզ Ուէլզ։

*** Իտալիոյ մէջ պետութիւնն ու եկեղեցին.— Իտալիոյ մէջ մեծ ջանք կը թափուի զատելու համար պետութիւնը եկեղեցիէն։ Սակայն Վատիկանը կը պնդէ Մուսոլինիի Ֆաշիստ ռէժիմին հետ կնքած «գօնգորտա»ին վրայ, որ կաթոլիկութիւնը կ'ընէ միակ կրօնքը՝ պետութեան։ Ցանձնախումբ մը կազմուած է կառավարութեան կողմէ որ կը ծրագրէ, հակառակ Պապին ընդդիմութեան բոլոր կրօնքները հաւասար գետնի վրայ դնել Իտալիոյ մէջ, կը գրէ «Նուեայրրs Տեսփէչ»ի Հռոմի թղթակիցը։

*** Զարիֆեն բարիֆ կը ծնի. — Ճարտի գրաւման ատեն ֆինական խամաճիկ կառավարութիւնը յիմար գաղափարը կ'ունենայ գրաւելու բոլոր այն շէնքերը որոնք կը պատկանէին Զայնա Իպլեհն Միրցի և հակայ գումարներ կը ծախսէ նորոգութեանց և բարեզարդումի համար։ Իր աշխատանքին պտուղը չվայելած՝ հաշտութիւնը վրայ կը հասնի ու կառավարութիւնը կը փոխէ, թողելով շէնքերը միսիոնարներուն։ Շատ աւելի լաւ վիճակի մէջ։

ԵՐԿԻՆՔԸ ՏՈՒՆ ՈՒՆԻՍ

Ունեւոր մարդուն մէկը մահամերձ էր: Մարդը երբեմ չէր խորհեր, թէ մահը ա՛յնքան օրուս պիտի գար: Հետեւաբար կանչել կուտայ ճօտարը որպէսզի իր կտակը պատրաստէ: Կտակին մէջ տունը կը թողու իր կնկան եւ զաւկին: Ուրիմ ողան՝ դեռ գրերէ մանուկ, կը լսէ հօրը այս խօսքերը: Թէպէտ չէր գիտեր թէ ի՛նչ ըսել է մեռնիլ, «Հայրիկ, կը հարցնէ. միտմտօրեն ուրիշ տուն մը ունի՞ս քեզի համար այն քու երթալիք երկրին մէջ»: Սոյն խօսքերը դաշոյնի մը նման կը մտնեն իր սիրտը: Պէտք էր խոստովանիլ սարսափելի հար, որ գերեզմանէն անդին կողմը տուն չունէր, մանաւանդ կար անմարելի կրակ մը: Սակայն այդ դժոխք ըսուած տեղը մարդոց համար չէր, հապա Սատանային ու անոր հրեշտակներուն համար: Ցիսուս եկաւ մարդիկը փրկելու այդ անաւոր տեղը իյնալէն, եւ այժմ կը պատրաստէ երկինքի մէջ բնակարաններ իր արեամբ փրկուածներուն համար: Ով ընթերցող, երկինքը տուն ունի՞ս:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԵԳԻՆՆԷ

Եգիպտոսի համար	40 Ե. Դ.
Սուրիոյ եւ Լիբանանի համար	350 Ս. Դ.
Ամերիկայի համար	2.50 Տօլար
Շիլին գործածուած տեղերու համար	8 Շիլին

Հատը ձեռքէ՝ 5 Եգիպտ. Դահեկան

Մեր ընթերցողներէն կը խնդրուի նկատի ունենալ սոյն փոփոխութիւնը

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. Կը խնդրուի որ բոլոր թղթակցութիւններ յօդուածներ եւ դրամական առաքումներ դրկուին հետեւեալ հասցէով.

K. T. SARIAN
American Mission
Alexandria (Egypt)

PRINTED BY SAHAG-MESROB PRESS, 25 SHARIA TEWFIK CAIRO